

20

Գեղանկարչուհու խոսքերի իսկությունը հաստատում են նրա դիմամիկ բնանկարների ծառերի պարը, բնության շունչը, որը շնչում է, ապրում է: Եվ այդ բոլորը Մարիամը ընկալում է ոչ թե անտարբեր հայացքով, այլ հոգով, որը ապրում է բնության հետ միասին: Նրա ընկալած աշխարհը, ստեղծված վրձնի խաղով, միաձուլում է մի միասնության մտքի ու զգացողության:

- Ինչո՞ւ գեղանկարչություն, այլ ոչ թե...
Կին-արվեստագետի կարծիքով իր համար ի՞նչ հարթության վրա է ընտանիք-արվեստ

ներդաշնակությունը:
- Ինչո՞ւ գեղանկարչություն. երևի թե գեներով է փոխանցվել: Կարողան երջանկահիշատակ հորս գրած քառատողերից մեկը, որ գրված է դեռ 30-ականներին, երբ նա դեռ դպրոցական է եղել.

Մտայլ ճակատին գորշ երկնքի
Ամպն է բարդվել շարվեշար,
Ու տեղում են արցունքի
Յեղեղները դեպի վար...

Չէի կարող արվեստը չսիրել: Մեկը կարողանում է բառերով արտահայտվել, իսկ իմը գույնն է:

Որդու՝ Արիսի հետ, որը մորից քիչ չի սիրում նկարել (ուսանում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի գեղանկարչական բաժնում) իրենց նկարներով «պաշարել» են բնակարան-արվեստանոցի ողջ տարածությունը, ապացուցելով, որ նրանց ընտանիքում ներդաշնակությունը բնության հետ կայացած է:

Տաք գույներով ամառային կամ աշնանային ապարոշը լույսի պսակով, պաղ ծնեռն իր զսպված գունաշապիկով հայրենի բնությունն իրենց են, նրանցն է և ինքը՝ Մարիամ Ամիրխանյանը ու բոլորն էլ մերն են՝ հայոց հողինը:

Լևոն ԽԱՉՍՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Լուս Անջելեսի «Հայաստան» պարային դպրոցի սաների համերգը Վանաձորում

Օգոստոսին, Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում, մեկօրյա համերգով հանդես եկան Լուս Անջելեսի «Հայաստան» պարային դպրոցի սաները: Միջոցառումը կազմակերպել էին Հայաստանի ազգային պարարվեստի միությունը և Վանաձորի քաղաքապետարանի կրթության ու մշակույթի բաժինը՝ քաղաքապետ Սամվել Դարբինյանի անմիջական աջակցությամբ: Սա հայրենիքում «Հայաստանի» առաջին համերգն էր այս տարին:

Համերգից առաջ «Հայաստանի» ղեկավարներ Արման և Նաիրա Վարդանյաններին, դպրոցի ծնողական խորհրդի ներկայացուցիչներին, Հայաստանի ազգային պարարվեստի միության նախագահ Կարեն Վարդանյանին, միության անդամներին ընդունեց քաղաքապետ Սամվել Դարբինյանը: «Հայաստան» առաջին անգամ հայրենիքում հանդես է եկել 2000 թվականին «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում: Այս անգամ եկել էին առավել ներկայացանալի 70-հոգանոց պարախմբով և ծնողական խմբի 40 ներկայացուցիչներով: Պարախմբի անձնակրտսեր սանը 6 տարեկան է, ամենաավագը՝ 23: Կ. Վարդանյանը շնորհակալություն հայտնեց Սամվել Դարբինյանին շեշտելով, որ Վանաձորի քաղաքապետարանն ու անձամբ քաղաքապետը լուրջ ուշադրություն են դարձնում մշակույթին, մշակութային դաշտում Վանաձորը մեծ ավանդ ու ներդրում ունի: Արման և Նաիրա Վարդանյաններն զգացված էին ջերմ ընդունելությունից: Վարդանյանները եղել են «Բերդ» պարային համույթի պարողներ: 1996-ին Լուս Անջելեսում հիմնելով «Հայաստան» պարային դպրոցը՝ շուտով ակնառու հաջողությունների են հասնում: 2002-ի ամռանը «Հայաստանը» հանդես է գալիս Իտալիայում անցկացված՝ ազգային պարերի միջազգային փառատոնում: Ապա բազմաթիվ այլ համերգներ, նվաճումներ, պարզակներ... Ս. Դարբինյանը մշեց, որ Վանաձորում մշտապես պատրաստ են այսպիսի համագործակցության և ամենայն աջակցություն կցուցաբերեն նման գեղեցիկ ծրագրերին: Կ. Վարդանյանն իրենց միության կողմից

պատվոգիր հանձնեց Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանին՝ «Հայաստան» պարախմբի մենահամերգը Վանաձորում բարձր մակարդակով կազմակերպելու և Հայաստան-Սփյուռք մշակութային կապերի պահպանման ու զարգացման գործում մշտնակալի ներդրման համար: Նմանատիպ պատվոգիր հանձնվեց նաև քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի պետ Գագիկ Աղաբաբյանին: Իսկ Վարդանյանները պատվոգիր հանձնեցին Ս. Դարբինյանին՝ ի հիշատակ 2005-ին Հայաստանում իրենց շրջագայության և իրենց ջերմ ընդունելու համար: Քաղաքապետը «Հայաստանի» ղեկավարներին մվիրեց Հովի. Թունանյանի դիմակարը և «Վերնատուն» նկարը: Միաժամանակ՝ Հայաստանի ազգային պարարվեստի միության նախագահին հանձնվեց պատվոգիր՝ հայոց պարարվեստի զարգացմանը մեծապես նպաստելու, Վանաձորի հետ մշակութային կապերի ամրապնդման և գեղարվեստական միջոցառումների կազմակերպման համար: Նըշվեց, որ «Հայաստան» արժանանում է պատվոգրի, և այն կհանձնվի դահլիճում: Իսկ դահլիճը լեփ-լեցուն էր, և շատերը դիտում էին հոտնկայս: Ներկայացվեցին ինչպես ազգային, այնպես էլ տարբեր ժողովուրդների, նաև ժամանակակից պարեր: Համերգի ավարտին քաղաքապետարանի

կրթության և մշակույթի բաժնի պետ Գ. Աղաբաբյանը քաղաքապետ Ս. Դարբինյանին, արվեստասեր հասարակայնության անունից շնորհակալություն հայտնեց Վարդանյաններին, պարային դպրոցի ամբողջ կազմին՝ հանձնելով քաղաքապետի պատվոգիրը՝ Սփյուռքում հայ մշակույթի, հայոց պարարվեստի գանձերն անխաթար պահպանելու, սերունդներին հայ ոգով դաստիարակելու հայրենամակեր գործի, Հայաստան-Սփյուռք մշակութային կապերի ամրապնդման, վանաձորցի արվեստասերներին անզուգական կատարումներով գեղագիտական վայելք պարգևելու համար: «Գոհար» պարային համույթի կողմից «Հայաստանին» ողջունեց համույթի ղեկավար, թիվ 3 մշակույթի տան տնօրեն Համլետ Երիցյանը՝ մվիրելով իր սաների ասեղնագործած հուշանվերը: «Հուզված ենք խորապես: Այս ջերմ ծափերը երեխաներին են հասցեագրված, որոնց 90 տոկոսն ԱՄՆ-ում է ծնվել, և մեծ մասն առաջին անգամ է Հայաստանում: Այս հրաշալի ընդունելությունը մեզ պարտադրում է պայծառ հիշողություններով գնալ և կրկին գալ այստեղ՝ երջանկամալու և երջանկացնելու: Շնորհակալություն քաղաքապետ Սամվել Դարբինյանին, ում շնորհիվ էր նաև որ մեզ մեր տանն զգացինք», - ասաց Ս. Վարդանյանը:

Խորեն ՂԱՄՊԱՆՅԱՆ, Վանաձոր

Վանաձորի գեղագիտական կենտրոնի սաների աշխատանքներից

Երիցյան Լիլիթ

Ջաղինյան Անժելիկա

«Ինտերկասպ» բարեգործականը 15 տարեկան է

Օրերս Վանաձորի «Էլկանի» համալիրում հանդիսավորությամբ նշվեց «Ինտերկասպ» բարեգործական կենտրոնի 15-ամյակը: Ինչպես ասաց միջոցառումը վարող Ջիվան Սարգսյանը՝ հորեյսանը նշելուց բացի հանդիսության զլխավոր նպատակն էր արժանին հատուցել այն մարդկանց, կառույցներին ու դեսպանություններին, որոնք մինչ այժմ անենազգալի ներդրումն են ունեցել «Ինտերկասպի» կայացման գործում: Դրամատուրգ, «Ինտերկասպի» պատվավոր անդամ Սամվել Խալաթյանը հակիրճ ներկայացրեց կենտրոնի անցած ուղին, բոլոր դժվարությունները, որոնք հաղթահարվել են արտասահմանյան և տեղացի գործընկերների աջակցությամբ: Բերվեցին բազմաթիվ փաստեր՝ կենտրոնի ձեռք բերած մեծ ճանաչման և հեղինակության վերաբերյալ: Ապա Ջ. Սարգսյանն անզվերեն լեզվով կարդաց Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանին», որը ոգևորությամբ ընդունվեց հատկապես արտասահմանցի հյուրերի կողմից: Հորեյսանական հանդիսության բացման, շնորհակալագրերի ու հուշանվերների հանձնման համար բեմ հրավիրվեց Լոռու մարզպետ Չենրիկ Քոչինյանը: - Ուզում եմ շնորհակալական խոսքս ուղղել բոլոր այն երկրներին, կազմակերպություններին ու անհատներին, որոնք ըստ անենայնի աջակցել են ոչ միայն «Ինտերկասպին», այլ ողջ Հայաստանին՝ իր դժվարին տարիների ընթացքում, - ասաց նա: Սարգսյանը հիշեցրեց ետերկրաշարժյան ժամանակները, երբ աշխարհի շատ երկրներ, հազարավոր, միլիոնավոր մարդիկ օգնության ձեռք մեկնեցին Հայաստանին, որպեսզի մեր երկիրն ուղղի իր մեջքը, ոտքի կանգնի և շարունակի բարգավաճել: Այդ գործում նա կարևորեց նաև «Ինտերկասպի» դերը, որը չսահմանափակվեց Վանաձորով, հումանիտար օգնություն հասցրեց Հայաստանի այլ տարածաշրջանների և պատերազմական վիճակում գտնվող Արցախի բնակչությանը: Հ. Քոչինյանը երախտիքի խոսք ասաց բոլոր նրանց, ովքեր 15 տարի առաջ հավատարմի և աջակցեցին Լորայր Չուլոյանի համարձակ նախաձեռնությանը՝ ստեղծել բարեգործական կազմակերպություն: Այս առումով առաջիններից էր Ռուսաստանի Դաշնության «Արիություն և հումանիզմ» միջազգային միությունը, որոնց ղեկավարներ Կառլախով և Վասիլի Կրիվառտենկոյին մարզպետը հանձնեց հուշանվերներ ու շնորհակալագրեր: Կ. Կրիվառտենկոյն շնորհավորեց բոլոր ներկայից հավաստելով, որ «Ինտերկասպի» հետ 1990-ին սկսված բարեկամությունը մշտապես արտահայտվել է լավագույն դրսևորումներով: Կենտրոնի հաջողությունը նա պայմանավորեց նաև տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ և արտասահմանյան երկրների հայաստանյան դեսպանությունների բարեհաճ վերաբերմունքով: Հունանվեր և շնորհակալագիր հանձնվեց նաև Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի առաջին նախագահ Ռուբեն Հակոբյանին: Եթե չստեղծվեր մարզական և բարեկամական այն կամուրջը, որը 25 տարի առաջ հիմնադրել էին Ն. Չուլոյանն ու Ռայներ Քոզելը, դժվար թե «Ինտերկասպին» ճանաչեին Գերմանիայում և հատկապես Եվրոպայում: Ռ. Քոզելը միայն 1989-90 թվականներին 50 մարզիկ՝ իր և ընկերների աջակցությամբ հրավիրեց Գերմանիա, իսկ երկրաշարժից անմիջապես հետո զլխավորեց իր երկրի առաջին 20 բարեարների խումբը, որը մեծ քանակությամբ օգնություն բերեց Վանաձոր: Գերմանացի մեր բարեկամը խոսեց «Ինտերկասպի» ճանաչման և հեղինակության մասին, հավաստելով, որ համագործակցությունը մշտապես կշարունակվի նաև իր ղեկավարած «Ինտերկասպ-Ռոյալանդ» միության շնորհիվ: Նրան և տիկնոջը՝ Ուտա Գերհարդին մարզպետը հուշանվերներ հանձնեց: Շնորհավորանքի խոսք ասաց Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռևազ Գաչեչիլաձեն: Նրա, ինչպես նաև Վրաստանով հումանիտար բեռներն ամվմաս տեղափոխելուն աջակցած, միջոցառմանը ներկա և բացակա ընկերների մասին ասվեցին ջերմ խոսքեր: Երախտիքի խոսքեր ասվեցին Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի դեսպանատների, առանձին մարդկանց հասցեին, որոնք մշտապես աջակցել են բարեգործական կենտրոնին, լուծել սահմանային բոլոր հարցերը: Միջոցառմանը ներկա էր Ուկրաինայի դեսպանատան ներկայացուցիչ Վլադիմիր Գուլիման՝ տիկնոջ՝ Ալիսայի հետ: Վլ. Գուլիման ևս արժանացավ հուշանվերի: Գերմանիան առաջինն ընդունեց «Ինտերկասպի» բեռնատարները և անհրաժեշտ պարա-



զաներով ու օգնությամբ բեռնված ճանապարհվեց Հայաստան: Ի նշան բարեկամության և երախտիքի՝ 1991-ին առաջին խաչքարը ինտերկասպցիները տեղադրեցին Գերմանիայում: Իր ելույթում Հայաստանում Գերմանիայի դեսպանի պաշտոնակատար Սիխաել Փլեբանը ևս ջերմ խոսքեր ասաց «Ինտերկասպի» մասին, որի հետ համագործակցությունն ավելի կընդլայնվի: Անգնահատելի է Բավարիայի Կարմիր խաչի ղեկավարներից մեկի՝ Ջիգ-ֆրիդ Չետմանսպերգերի դերը «Ինտերկասպի» կայացման գործում: Դեռևս 1988-ին, նրա ուղեկցությամբ, հարյուրավոր տոննա մարդասիրական բեռներ են տեղափոխվել աղետի գոտի: Նա իր խոսքում ասաց, որ առանձնակի ջերմությամբ է վերաբերվում մեր երկրին, քանզի կինը՝ Անահիտը, հայ է ստեփանավանցի: Պարոն Չետմանսպերգերին շնորհավորելիս երախտագիտություն հայտնվեց նաև Գերմանիայի ժողովրդին, կառավարությանն ու հայաստանյան դեսպանատանը: Ջերմ խոսքեր ասվեցին «Ինտերկասպի» Ֆրանսիայում գտնվող բարեկամների հասցեին, մասնավորապես՝ 2004-ից «Ինտերկասպ Ֆրանս-Արմենի» միության նախագահ Պատրիկ Չիլեանի մասին, որը հորեյսանական միջոցառման հովանավորներից մեկն է: Ի դեպ, «Ինտերկասպի» կողմից Եվրոպա տեղափոխված 11 խաչքարերից 4-ը տեղադրված է Ֆրանսիայում՝ ի նշան վաղեմի բարեկամության և Հայաստանին ցուցաբերած մեծածավալ օգնության: 1991 թվականին Իտալիայի «Սուրադ-Ռաֆայելյան» վարժարանն և «Ինտերկասպի» միջև կնքված պայմանագրի արդյունքում մեր մարզից 9 երեխա բարձրակարգ կրթություն ստացավ այնտեղ, նրանց մի մասն ուսումը շարունակեց Եվրոպայի հեղինակավոր համալսարաններում: Այդ գործի կնքահայրերն էին Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսիսյանը և Ռաֆայել վարդապետ Անդոնեսանը: Միջոցառմանը ներկա էին Իտալիայից ժամանած Միսիթարյան միաբանության Աթոռակալ Հայր Չովսեփ վարդապետ Պեհեսմիլեանը և միաբանության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Հայր Սերոբ վարդապետ Չամուրլեանը, ովքեր արժանացան մեծարանքի ու երախտիքի ջերմ խոսքերի: Երախտիքի խոսքեր ասվեցին նաև Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի կառավարություններին, հայաստանյան դեսպանատներին: Միջոցառմանը ներկա էր մեր երկրում Բուլղարիայի արտակարգ և լիազոր դեսպան Ստեֆան Դիմիտրովը՝ տիկնոջ՝ Դինկա Դիմիտրովայի հետ: Դեսպանը շնորհավորեց «Ինտերկասպին» հետագա համագործակցության պատրաստակամություն հայտնելով կենտրոնի ղեկավարությանը: Նշվեցին «Ինտերկասպին» աջակցություն ցուցաբերած բոլոր ղեկավար անձանց, գերատեսչությունների ու անհատների հնունները, ներկա գտնվողներն արժանացան շնորհակալագրերի ու հուշանվերի: Նրանց թվում էին Լոռու մարզպետ Չենրիկ Քոչինյանը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, Աժ պատգամավոր Վահրամ Բաղդասարյանը և ուրիշներ: Հանդիսավորությամբ նշվեցին «Լոռվա ասպետ» Պատվո նշանի 15 դափնեկիրների անունները: Նրանց մի մասը, այդ թվում՝ ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, ներկա էին միջոցառ-

մանը: Եվս մեկ արժանավոր լուռեցի համալրեց «Լուսնա ասպետ»-ների շարքը: Այդ պատվին արժանացավ Վազգեն Բաղալյանի սան, արոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Վախթանգ Դարչինյանը: Նա ներկա չէր միջոցառմանը, քանի որ պատրաստվում է նոր մենամարտի. 3. Քոչինյանը Պատվո նշանը հանձնեց բռնցքամարտիկի հորը՝ Ռուբիկ Դարչինյանին: Ընթերցողները գիտեն 3այոց մեծ եղեռնի 90-ամյակի կապակցությամբ կազմակերպված ուխտագնացության մասին, որի նախաձեռնողն էր Վանաձորի ավագանու անդամ Էդվարդ Խլիվայանը: Նա ուխտագնացության 15-րդ անձնագիրը՝ «Ինտերկապի» 15-ամյակի առթիվ հանձնեց Նորայր Զուլյանին: Ավանդույթին հավատարիմ այս անգամ նա անակնկալ էր սպասվում ներկաներին: 3այ մեծանուն գորավար, մարշալ Բաղրամյանը, ի նշան մեծ սիրո և բարեկամության, իր դաշույնը նվիրել է Վասիլի

Կրիվառոտենկոյին՝ ում հետ շուրջ մեկ տասնամյակ աշխատել է: «Ինտերկապի» 15-ամյակի առթիվ՝ երկար տարիներ իր տանը սրբությամբ պահած այդ մասունքը Վ. Կրիվառոտենկոյն և Վ. Նեմչինովը հանձնեցին 3այաստանի պատմության թանգարանի փոխտնօրեն Կարեն Խաչատրյանին: Վերջինս շնորհակալություն հայտնեց թանկարժեք նվերի համար՝ հավաստելով, որ դաշույնը կհամալրի Մեծ գորավարի՝ թանգարանում պահվող անձնական իրերի շարքը: 3անդիսությունն ավարտվեց հյուրասիրությամբ և տոնական համերգով: «Ինտերկապը»՝ նոր ժամանակներին համապատասխան գործունեություն ծավալելու ուղիներ է փնտրում, ինչին անշուշտ կնպաստեն նաև Վանաձորի քաղաքապետի աջակցությամբ և համայնքի ավագանու որոշմամբ անվարձահատույց հատկացված տարածքները:

Վ. Կրիվառոտենկո. «Ես երջանիկ եմ, որ եղել եմ մարշալ Բաղրամյանի մտերիմն ու բարեկամը»

Օգտվելով առիթից, որ Վանաձորում է մարշալ Բաղրամյանի մտերիմ ընկեր, Ռուսաստանի Դաշնության «Արիություն և հումանիզմ» միության հիմնադիր-ղեկավար Վասիլի Կրիվառոտենկոյն, ճեպագրույց ունեցանք նրա հետ: Իհարկե, հիմնական հարցն այն էր, թե մեծ գորավարի դաշույնը ինչպե՞ս է նրանից ստացել և ինչպե՞ս որոշեց 3այաստանի պատմության թանգարանին նվիրել «Ինտերկապի» հոբելյանի օրը: Նա սկզբում պատմեց իրենց կազմակերպության, Նորայր Զուլյանի հետ համագործակցության մասին:



Բաբաջանյանի, մյուսների նկատմամբ: Բաղրամյանը նախ գորավարի իր մեծ տաղանդը դրսևորեց Սարդարապատի ճակատամարտի ժամանակ, ուր հայերը փայլուն հաղթանակ տարան, ապա Մեծ հայրենականում, ուր նա որոշիչ դեր խաղաց՝ իրականացնելով պատերազմական հսկայածավալ գործողություններ, որոնք հաղթական ավարտ ունեցան: Մեր համատեղ աշխատանքի ժամանակ համագործակցությունը վերածվեց սերտ բարեկամության: Բազմաթիվ անգամներ եղել ենք մարշալի տանը, վայելել նրա՝ միայն հայերին հատուկ հյուրընկալությունը, լսել նրա իմաստուն խորհուրդները: Այդ դաշույնը նա ինձ նվիրել է ավելի քան քսան տարի առաջ՝ ի նշան մեծ սիրո մեր ազգի ու պետության նկատմամբ: Ես երջանիկ եմ, որ եղել եմ մարշալ Բաղրամյանի մտերիմն ու բարեկամը: Այս տարի լրացավ Մեծ հայրենականի 60-ամյակը և ես որոշեցի իմ վաղեմի բարեկամ Նորայր Զուլյանի հիմնադրած «Ինտերկապ» բարեգործական կենտրոնի 15-ամյակի օրը, հենց Վանաձորում, նվիրել Բաղրամյանի դաշույնը 3այաստանի պատմության թանգարանին:

Սանվել ՄԻԿՈՅԱՆ

- Շուրջ 10 տարի ես 3ովի. Բաղրամյանի հետ աշխատել եմ կոմերիտմիության Կենտկոմի նույն բաժնում: Մարշալը նաև ԽՍՀՄ գորահրամանատարների խորհրդի նախագահն էր, - ասաց նա: - Երբ տեսանք, որ փլուզվում է ԽՍՀՄ-ը, 1988-ին որոշեցինք ստեղծել մեր միությունը՝ նպատակ ունենալով պահպանել այն լավ և ու օգտակարը, որ կար նախկին համակարգում: Մեր հայրերն ու պապերը միասին են պայքարել խորհրդային Միության պահպանման համար, միասին են մարտնչել 3այրենական պատերազմում և հաղթանակի հասել: Մեր կարևոր խնդիրներից մեկը միության նախկին համրապետությունների, հատկապես՝ 3այաստանի

հետ կապերի պահպանումն է ու համագործակցությունը և հետագայում էստաֆետը եկող սերունդներին փոխանցելը: 1990-ին, Մոսկվայում, Նորայր Զուլյանի հետ մեր գրույցի ժամանակ նրան առաջարկեցինք ստեղծել որևէ բարեգործական կազմակերպություն՝ սատարելու երկրաշարժից հետո ծանր կացության մեջ հայտնված երկրին, որը նաև պատերազմի մեջ էր: Ես շատ ուրախ եմ և հպարտ, որ «Ինտերկապը» կայացավ և այսօր ճանաչում ունի ողջ Եվրոպայում: Ինչ վերաբերում է մարշալ Բաղրամյանին, ես մեծ ակնածանք ունեմ և նրա, և հայ մեծանուն գորավարներ Իսակովի,

ընկալությունը, լսել նրա իմաստուն խորհուրդները: Այդ դաշույնը նա ինձ նվիրել է ավելի քան քսան տարի առաջ՝ ի նշան մեծ սիրո մեր ազգի ու պետության նկատմամբ: Ես երջանիկ եմ, որ եղել եմ մարշալ Բաղրամյանի մտերիմն ու բարեկամը: Այս տարի լրացավ Մեծ հայրենականի 60-ամյակը և ես որոշեցի իմ վաղեմի բարեկամ Նորայր Զուլյանի հիմնադրած «Ինտերկապ» բարեգործական կենտրոնի 15-ամյակի օրը, հենց Վանաձորում, նվիրել Բաղրամյանի դաշույնը 3այաստանի պատմության թանգարանին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՎԱՌԱԿԸ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՉՆԱԳՐԵՐՈՎ

Սեպտեմբերի 24-ից Ռուսաստանից 3այաստան և 3այաստանից Ռուսաստան քաղաքացիների ուղևորություններն «իրականացվելու են միայն արտասահման մեկնելու համար վավերական փաստաթղթերով»: Այդ մասին հայտնել են ՌԴ-ի արտաքին գործերի նախարարությունում: «Փաստաթղթերի ռուսաստանյան ցանկին համապատասխան, - նշել են Սնովենսկյան հրապարակում, - դրանք թվում են դիվանագիտական և ծառայողական անձնագրերը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացու անձնագիրը, որը հաստատում է ՌԴ-ի քաղաքացու անձը երկրի սահմաններից դուրս, և նավաստու անձնագիրը»: «Փաստաթուղթը կորցնելու կամ դրա մեխանիկական վնասվածքի դեպքում ռուսաստանցիները կարող են երկիր վերադառնալ Ռուսաստանի Դաշնություն մուտքի վկայականով, - ճշտել են Ռուսաստանի

ԱԳՆ-ում: - Այդ փաստաթուղթը ձևակերպվում է արտասահմանում Ռուսաստանի դեսպանությունների և հյուպատոսությունների կողմից, իսկ 3այաստանում՝ Երևանում Ռուսաստանի դեսպանության հյուպատոսական բաժնում կամ Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոսարանում: Մոսկվան և Երևանը, հիշեցրել են ՌԴ արտգործնախարարությունում, օգոստոսի 24-ին համաձայնություն են ձեռք բերել կրճատելու այն փաստաթղթերի ցանկը, որոնք նախատեսված են իրենց քաղաքացիների փոխադարձ անայցազիր ուղևորությունների վերաբերյալ երկու երկրների կառավարությունների միջև ստորագրված 2000 թվականի սեպտեմբերի 25-ի համաձայնագրով»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ:

ԾՈՒՌ ԵՍՏԵՆՔ՝ ՇԻՏԱԿ ԽՈՍԵՆՔ



Վերջին ժամանակներս ամբողջ աշխարհը խոսում է հեղափոխությունից. նախորդն ազգային, թե այլ գույնի՝ էական չէ: Աշխարհը թևակոխել է հերթական հեղափոխական փուլը, ինչպես 20-րդ դարի սկզբին էր, այնուհետև 80-ականների վերջին և 90-ականների սկզբին: Հեղափոխությունից խոսում են նաև մեր երկրում, թեև այս բառի մեջ չեն դնում այն իմաստը, որը հարկ էր դնել: Պետք է խոսել ոգու և մտքի հեղափոխության անհրաժեշտության մասին: Եթե դա չկա, եթե տիրաառչակ ազգային մենթալիտետը իրապես արմատական փոփոխությունների չի ենթարկվել, ապա թեկուզ քսան գունավոր կամ թավշյա հեղափոխություն էլ գործես, միևնույն է՝ երկրումդ ոչինչ չի փոխվի: Հնարավոր է՝ փոխվի իշխող վերնախավը, բայց ոչ ավելին: Մինչդեռ գոյություն ունի պատմության երկաթյա օրենքը. օբյեկտիվ իրողությունների հետ հաշվի չեն ստող, ավանդական դիրքորոշումների մակարդակին մնացող և նախկին չափանիշներով առաջնորդվող ժողովուրդները, որպես կանոն, դառնում են առավել երիտասարդ և ազդեցիվ քաղաքակրթությունների զոհը: Եվ հակառակը, շահում են այն ժողովուրդները, ովքեր իրենց ազգային շահերից ելնելով՝ հաշվի են նստում նոր իրողությունների հետ, ովքեր արագ կողմնորոշվելով՝ քայլում են ժամանակին համընթաց, ովքեր թախտին նստած բախտին չեն սպասում, այլ իրենք են ընդառաջ գնում համաշխարհային գործընթացների՝ դրանց հարմարեցնելով իրենց ազգային շահերը:

Ցավոք, մեր ժողովրդի պատմության մեջ քիչ չեն օրինակները, երբ մեզ բռնի ուժով ընդգրկել են այդ գործընթացների մեջ կամ պարզապես դուրս մղել դրանցից: Եվ ամեն անգամ պատճառը հայի ուշացած «վերջին խելքն» է:

Թռուցիկ հայացք գցենք մեր պատմության վերջին փուլին ոչ այնքան տնտեսական կամ սոցիոլոգիական, որքան ազգային մենթալիտետի տեսանկյունից: Ոչ մեկին չի՞ զարմացնում, թե ինչու ոչ հեռավոր անցյալում այս կամ այն գրքի բաժանորդագրության համար գիշերներ շարունակ հերթ կանգնող ժողովրդի զավակներն այսօր դարձել են էժան աշխատուժ ռուսաստաններում և թուրքիաներում՝ հերթական անգամ սփռվելով աշխարհով մեկ, իսկ սեփական երկրում մտածում են միայն հանապազօրյա հացը վաստակելու մասին: Մենք, որ այն ժամանակ տնտեսության, կրթության և զարգացած աշխարհի հետ կապերի առումով հավասար մեկնարկային պայմաններում էինք այսօր արդեն Եվրամիության անդամ դարձած մերձբալթյան համրապետությունների հետ, անկում ենք ապրել՝ հասնելով աֆրո-ասիական վարչակազմերի պարզունակ մակարդակին:

Սիավասիկ. Երևանի, Գյումրիի ու Վանաձորի հսկա արտադրական (այդ փուլում կառուցվել, մեքենաշինության և քիմիական) ձեռնարկությունները, որոնք Հայաստանը դարձրել էին ԽՍՀՄ-ի ինքնաբավ հանրապետություններից մեկը, այսօր բարձիթո-

ղի վիճակում են: Իհարկե, կարող են առարկել՝ ասելով, թե ողջ այդ արդյունաբերական հզորությունն ընդամենը հարմարեցված էր ԽՍՀՄ կայսերական տնտեսությանն ու խորհրդային տնտեսական վիթխարի մեքենայի բաղկացուցիչ մասն էր և այսօր արդեն չի բավարարում Հայաստանի տնտեսական մակարդակի պահանջները: Այս տրամաբանությամբ, սակայն, նույն ճակատագրին պետք է արժանանային նաև Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի և Սլովակիայի ինքնաբավ արտադրական հզորությունները: Բայց արի ու տես, որ այնտեղ շատ արագ կողմնորոշվեցին՝ հասկանալով, որ այդ ձեռնարկությունները պետք է շտապ վաճառել եվրոպական այնպիսի հսկաների, ինչպիսիք են, ասենք «Իկեան», «Սիմենսը», «Դայմլեր Բենցը»: Ընդամեն, չբավարարվեցին սոսկ բարձր տեխնոլոգիաների զարգացման մասին խոսակցություններով, այլ իրականում զարգացրին իրենց տնտեսությունը, և այսօր արդեն Էստոնիան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Եվրոպայում առաջատարն է: Իսկ մենք ընդամենը պարտեցում էինք բարձր տեխնոլոգիաների մեր հարուստ ներուժով: Եվ որտե՞ղ է այդ ներուժը՝ Սիլիկոնե հովտո՞ւմ, թե՞ այդ նույն Էստոնիայում՝ ծառայելով ի շահ ամերիկացիների և եվրոպացիների:

Հիմա էլի կփորձեն արդարանալ, կասեն, թե մեր երկրում ազատականացման ու սեփականաշնորհման գործընթաց էր, մեր հայրենական գործարարները (իմա՝ օլիգարխները) դարձել են լիարժեք ձեռնարկատեր, էլ ի՞նչ կարիք կա հայրենական արտադրական հզորությունները հանձնել օտարների ձեռքը, ի վերջո մի օր պիտի՞ վերականգնենք մեր տնտեսությունը: Բանն էլ հենց այդ է: Տնտեսության ազատականացումն ու ունեցվածքի սեփականաշնորհումը մեր շուկայական դարաշրջանում պետքական և անհրաժեշտ բաներ են: Բայց չգիտես ինչու ազատականացման արդյունքում մեր որոշ հայրենակիցներ դարձան բավական ապահովված մարդիկ շնորհիվ անօրինական միջոցների: Խոսքն այն հայերի մասին է, ովքեր երեկ և այսօր գնում են ամենավերջին մակնիշի մերսեդեսներ և ջիփեր, ովքեր գնումներ են անում թանկ խանութներում և Երևանում անշարժ գույքի գներն այնքան են բարձրացնում, որոնք հանգիստ կարող են մրցակցել Սան Ֆրանցիսկոյի և Փարիզի գներին: Ի տարբերություն պրոֆեսիոնալներից բաղկացած միջին խավի, այս «վերնախավը» բոլորովին առաջադեմ չէ: Նրանք ներդրումներ չեն անում կրթության բնագավառում, նույնիսկ

իրենց զավակների համար, չեն ուղարկում նրանց Եվրոպայի և Ամերիկայի հեղինակավոր բուհերում գիտելիքներ ձեռք բերելու, չեն տիրապետում օտար լեզուների և չեն աջակցում Եվրոպայի հետ ինտեգրացմանը, քանզի քաջ գիտակցում են, որ Եվրոպական արժեքներին ինտեգրվելը կստիպի երկրում հաստատել օրենքի գերակայություն, այսինքն՝ սահմանել խաղի այնպիսի կանոններ, որոնք կխանգարեն սեփական շահերին ծառայեցնել ներկայիս համակարգը: Մինչդեռ միջին խավը՝ այսինքն իրենց բնագավառներում պրոֆեսիոնալ մարդիկ, որոնք ցանկանում են շարժվել քաղաքակիրթ խաղի կանոններով, ավելի ու ավելի են մարգինալանում՝ բախվելով բարձր հարկերի, բիզնեսի համար բոլորովին աննպաստ պայմանների, մշտական ինֆլյացիայի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գնի աճի հետ: Դե, իսկ նրանք, ովքեր զօր ու գիշեր տքնում են՝ փողոցում առևտուր անելով և շինարարության վրա, ընդհանրապես հայտնվում են «լուսանցքում»՝ մի կերպ ծայրը ծայրին հասցնելով: Եվ այս ամենը տեղի է ունենում այն պատճառով, քանի որ այստեղ որոշել են, որ կարելի է յուրա գնալ առանց ուժեղ սոցիալ-տնտեսական ինստիտուտների և խաղի այն կանոնների, որոնք խթանում են արդար տնտեսական աճը: Ոչ ֆինանսական դոմորների հատկացումները, ոչ Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամն ի վիճակի չեն օգնել մեզ՝ հաղթահարելու այս ճգնաժամը: Նրանց հատկացրած ֆինանսական միջոցները իրականում միայն կայունացնում են կոռումպացված և անարդյունավետ համակարգը՝ օգնելով ժամանակ շահել այն մարդկանց, ովքեր չեն ցանկանում ապրել քաղաքակիրթ կանոններով, ովքեր դեմ են տնտեսությունը խթանող բարեփոխումներին: Այսպես երկար շարունակվելու դեպքում աղքատները աղքատ կմնան, միջին խավը կկորցնի իր նշանակությունն ու ազդեցությունը, իսկ մաֆիոզատիկ վերնախավը միայն կբաժնապատկի իր հարստությունն ու կամրապանդի իշխանությունը:

Երկրի և հասարակության օլիգարխացումը կանխելու համար անհրաժեշտ էր, որպեսզի քաղաքական իշխանությունը մասնավոր տնտեսական շահեր չհետապնդեր, որպեսզի ընտրությունների արդյունքները կախված չլինեին տեղական օլիգարխների ֆինանսական աջակցությունից: Բայց քանի որ մեր երկիրը փոքր է և տնտեսությունն ու քաղաքականությունը սերտորեն փոխկապակցված են, քաղաքական իշխանությունն ու տնտեսական օլիգարխիան սերտաճեցին (nomina sunt odiosa՝ անուններ չտանք): Եվ 1995թ. սկսած հանրապետական, քաղաքային ու տեղական մասշտաբի ընտրություններում մենք այս գործընթացի ականատեսն ենք:

Երկու ելք ունենք: Ըստ առաջին՝ պայմանականորեն «լատինաամերիկյան» կոչված տարբերակի, Հայաստանում գոնե մի

15 տարով պետք է դադարեցնել ընտրությունները, ինչպես դա արեցին Ֆիդել Կաստրոն Կուբայում և Պիմոչետո՝ Չիլիում (ահա ո՞րն է ճշմարիտ հեղափոխությունը), մինչև երկրում կծնավորվի ազատ շուկայական հարաբերությունների և ազատականացման հիմքը՝ նոր մտածելակերպով, նոր աշխարհայացքով և, միաժամանակ, որևէ գերտերության հզոր աջակցությունն ունեցող (ի դեպ, այս տարբերակն է հենց փորձում այսօր իրականացնել Կովկասի Պիմոչետոն ու Վրաստանի

Ֆիդել Կաստրոն՝ Սիխայիլ Սահակաշվիլին) պրոֆեսիոնալների միջին դասը: Երկրորդ՝ այսպես կոչված բալթյան տարբերակով, հարկ է հրավիրել առավել հզոր օլիգարխների (որոնք գոյության մասին մեր ժողովուրդը տեղյակ չէ, բայց երկուստեք իրենց գործը կանեն. մեկը եկամուտ կստանա և ճշտապահորեն կվճարի հարկերը, մյուսը այդ եկամուտներից և հարկերից կունենա այնքան բաժին, որ կապահովի և իր յուզն ու բրինձը, և գրքեր կառնի, և հանգստանալու կնեկնի Փարիզ ու Ռի-

վերա), ասենք, այդ նույն Եվրամիությունից, որոնց համար մեկ է տեղական իշխանություններն իրենց տանիք կլինեն, թե ոչ: Եթե մենք դեռ չենք հասունացել երկրորդ տարբերակի համար, ապա պետք է լրջորեն խորհենք առաջինի մասին: Իսկ եթե մենք, այնուամենայնիվ, ընդունակ ենք հեղաշրջել մեր գիտակցությունն ու մտածելակերպը, ուրեմն ժամանակն է, որ սովորենք աշխարհին նայել ոչ միայն մեր 30 հազար քառակուսի կիլոմետր տարածքի պրիզմայով:

Դավիթ ՉՈՐՅԱԼ

Լոռու սոցիալական առաջընթացը կարող է պայմանավորվել տուրիզմի զարգացմամբ

Հայ ժողովուրդը երրորդ հազարամյակի շենը ոտք դրեց նորացված քաղաքական և սոցիալ-տնտեսական կարգավիճակով: Արժանապես փոխվել են կյանքի ընթացքն ու շարժիչ ուժերը: Չկա այլևս վաղեմի ժամանակների աջակցությունն ու հովանավորությունը: Մնացել ենք ինքներս մեզ հետ, գրեթե մեր հույսին: Երկրի և ժողովրդի կենսական շահերի ապահովման տեսակետից ամենահուսալին և հեռանկարայինը սեփական հզոր արտադրությունն ունենալն է՝ ինչին հասնելուն, ցավոք, դեռ հեռու ենք: Ժառանգություն ստացած մեր արդյունաբերությունը հիմնականում կազմալուծված է, նորն էլ դանդաղ է զարգանում: Այդ պատճառով է, որ մենք ավելի շատ գնորդ ենք, քան վաճառող (նկատի չունեն երկրում ծավալված իրանական, թուրքական և այլ երկրներից ներմուծված ապրանքների զանգվածային, հաճախ բազմաստիճան վերավաճառքը): Երկրի առանձնահատուկ պայմանները, շրջափակման իրողությունն ու սպառնալիքները հարկադրում են, որ արտադրությունը մեզանում հատկանշվի երկու կարևոր կողմերով. հիմնված լինի առավելապես տեղական նյութական հենքի վրա և ունենա այնպիսի ուղղվածություն, որ անհրաժեշտության դեպքում (էքստրենալ պայմաններում) ծառայի ստրատեգիական խնդիրներին: (Կարծում եմ՝ ասվածի էությունից չի բխում, որ մի շարք արտադրական հզորություններ և լուրտներ սեփականաշնորհվում են կամ համընկնում այլ պետությունների): Դուլզն իսկ չնսեմացնելով արտադրության կենսական նշանակությունը, շատ կարևոր են համարում նաև այլ հնարավորությունների օգտագործումը, հարակից ոլորտների ներառումը: Դրանք թվում են նկատի ունեն առաջին հերթին հանգրսուի ու տուրիզմի ինդուստրիայի զարգացումը, որի համար նպաստավոր պայմանները Հայաստանի մի շարք տարածաշրջաններում, առավել ևս Լոռիում, առկա են: Բնակլիմայական պայմանները, հոգևոր արժեքները, ճարտարապետական հուշարձանները, մեր ժողովրդի հյուրընկալ ավանդույթները, բարեկիրք և տրամադրող ոգին ասվածի առհավատչյան են:

Լոռվա մեծ հարստությունն են կազմում բազմաբնույթ և բազմաբանակ ճարտարապետական հուշարձանները. դրանք եկեղեցիներ են, վանքեր, ամրոցներ, պալատական շինություններ, կամուրջներ, բնակատեղիներ, դամբարաններ, քարավանատներ, խաչքարեր և այլն: Հայ միջնադարյան ճարտարապետությանը վերաբերող շատ եզակի դրսևորումներ կարելի է տեսնել Լոռվա հուշարձանների օրինակով: Բնաշխարհը հանրապետության պատմաճարտարապետական հուշարձաններով ամենահարուստ շրջաններից է. այդտեղ են գտնվում ամենամեծ թվով միջազգային և հանրապետական նշանակության հուշարձանները: Սակայն խնդիրը լոկ քանակական գերազանցության մեջ չէ: Այդ քանակը դրսևորվում է այնպիսի որակական փայլատակումներով, որ դրանք մոտ նսեմանում է ամեն մի համեմատություն: Հայ միջնադարյան ճարտարապետության ամենաշքեղ, գեղատեսիլ և հարուստ հուշարձանախումբն անվարան կարելի է համարել Հաղպատի համալիրը՝ իր դասական համակառուցային արժեքով և բարձր հատկանիշներ ունեցող բազմաբնույթ մեծաթիվ շինություններով: Հայկական ճարտարապետության ամենագեղաբանդակ և կառուցիկ երկու-երեք հուշարձաններից մեկը Հաղպատի զանգակատունն է՝ իր աչք շոյող համաչափություններով, ծավալատարածական նրբաքանդակ ներդաշնա-

կուններով, գունային ինքնատիպ զուգադրումներով: Գմբեթի հայտնագործումից հետո հայ ճարտարապետության մեջ ամենանշանակալից կառուցքային ներդրումը խաչածակող գույգ կամարների հնարքն է, որն ամենակատարյալ և տպավորիչ մարմնավորումն ստացել է Հաղպատի գավթուն: Հայ միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության ամենաաշխարհիկ, ամենարժեքավոր ամբողջական ձևով պահպանված երկու շինություններից մեկը գտնվում է Հաղպատում: Դա հորինվածքային պարզ ու վճիտ ձևերով, կառուցողական բարձր հատկանիշներով, մտերմիկ ու առօրեական ջերմությամբ սեղանատան հոյակապ շենքն է, որն իր հնչողությամբ, հմայքով և կատարելությամբ ոչնչով չի գիջում պաշտամունքային առաջնակարգ շենքերին: Ամենամեծ թռիչքով ամբողջական պահպանված միջնադարյան ճարտարագիտական կառույցը Սանահինի կամուրջն է, որում ճարտարագիտական համարձակ մտահղացումը, շինարարական տեխնիկայի բարձր մակարդակը սերտորեն զուգակցված են ճարտարապետական-գեղարվեստական նուրբ զգացողության հետ: Հայաստանի ամենամեծ, հետաքրքիր և եզակի կառուցվածքային լուծումով գրատունը Սանահինի վանքին է, որտեղ մոնումենտալացված է ժողովրդական անայուն գլխատան այն տեսքը, որում հազարաշեն ծածկը հենվում է կողմերի միջնամասերը կապող չորս մարդուկների վրա: Միջնադարյան ամենարժեքավոր հորինվածքով աղբյուրները, որոնք մեզ են հասել ամբողջական տեսքով, դրանք Հաղպատի և Սանահինի վանքային աղբյուրներն են: Հանրապետության տարածքի երկու ամենատպավորիչ ավերակներից մեկը գտնվում է Լոռիում. դա Դսեղի Բարձրաքաշ Սուրբ Գրիգորի վանքն է (մյուսը հանրահայտ Ջվարթնոցն է) իր եթերային երանգներով, հուրհրատին տվող արծաթափայլով, բացառիկ վարպետությամբ և նրբաճաշակությամբ կերտված քանդակագործ բեկորներով, հարուստ վիմագրերով: Ամբողջական տեսքով պահպանվող, վաղագույն, հորինվածքային բնութագրական հատկանիշներով օժտված գմբեթավոր բազիլիկ հուշարձանը Օծունի եկեղեցին է՝ հայ ճարտարապետության հանգույցային և բացառիկ կարևորություն ունեցող կառույցներից մեկը՝ պարզ, հստակ ծավալներով, ներդաշնակ համաչափություններով, մեծ վարպետությամբ կերտված նրբին ու բազմաթեմա քանդակներով, ճարտարապետական մանրամասներով, գունեղությամբ: Յուրահատուկ, մեծ վարպետությամբ և կառուցվածքային հնարամտությամբ լուծված գմբեթային ժամակարգ ունի հուրակերտի եկեղեցին, որի թմբուկն իրականացված է ոչ թե խուլ պատերով, ինչպես սովորաբար լինում է, այլ 30 սյուններով, որոնց միջև թողված ազատ տարածություններից թափանցող առատ լույսի պայմաններում սյուները դիտողի համար աննյութանում են, և գմբեթի հսկայական լուսապսակն իր ներքին ողջ հմայիչ կերտվածքով հառնում է դիտողին, ասես երկնքից կախված: Լոռիում են գտնվում հանրապետության տարածքի Ամենափրկիչ կոչվող 4 գորավոր խաչքարերից 3-ը (Հաղպատում, Դսեղում, Սարցում), որոնք կարևորվում են իրենց պատկերագրական հարստությամբ, քանդակագործական արվեստով, տարբեր արտահայտամիջոցների վարպետներն ու ներդաշնակ միահյուսմամբ: Ջարգացած միջնադարում հայ-վրացական մշակութային առնչությունների ճարտարապետական կապերի, կրոնադավանաբանական հարցերի

բացահայտման տեսակետից բնութագրական, խոսուելու հուշարձանների ընտրանին գտնվում է Լոռիում. Քոբայր, Ախթալա, Սեդ-վի, Բզավոր, Զենվանք և այլն, որոնք դարաշրջանի բնութագրական հատկանիշներով, բարձրարժեք տեղաբնակներով, քարի մշակման բացառիկ վարպետությամբ եզակի են: Ուշագրավ է, որ Լոռու տարածքում են ամենից արգասաբեր շինարարական բարեգործություն ծավալել հայ թագավորական և իշխանական ազնվագույն կանայք, ինչի արդյունքը եղել են մեկը մյուսից արժեքավոր, զարմանահրաշ և բացառիկ գլուխգործոցներ (Սանահինի, Զաղպատի գլխավոր եկեղեցիներ, Սանահինի գրատուն, կամուրջ, Քոբայրի եկեղեցիներ և այլն): Այս շարքը Լոռու շատ այլ կառույցների օրինակներով կարելի է երկար շարունակել, սակայն բերվածներն էլ, երկի թե, բավարար են ցույց տալու, որ Լոռին, իրոք, մշակութային գանձերի աշխարհ է, ներուճակ հարստություն, դեպի ուր պետք է հայացքը դարձնել: Ճարտարապետական հուշարձանները բնության և մարդու ստեղծած պատմամշակութային այլ հարստությունների հետ, մեր երկրի գործընդերմիտ են: Անգնահատելի է դրանց դերը գիտության, քաղաքակրթության, գեղարվեստական, հայրենասիրական դաստիարակության և այլ առումներով: Դրանց գոյությունը բարեբախտություն է և մեծագույն շնորհ, նաև պահանջ ու պատասխանատվություն: Դրանք տպավորիչ, հարուստ և շոշափելի են դարձնում միջավայրը, իմաստավորում և լուսավորում անցած ուղին, կարևորում, բազմապատկում արժեքը: Որպես բարձր քաղաքակրթության արգասիքներ, դրանք կարող են ավելի լայն մասշտաբով դեպի իրենց ձգել մարդկանց՝ աշխարհի բոլոր ժայրերից: Պետք է վերականգնել, խնամել այդ հուշարձանները, որ հարատևեն, գալիքին փոխանցեն պատմության քառուղիներից եկող մեր ժողովրդի արարչագործության բարե անմռունջ վկայագրերը: Երկիրը պետք է օժտել հանգստի, սպասարկման, հյուրանոցային հարմարավետ ցանցով, բարեկարգ ճանապարհներով, տրամադրող միջավայրով, որի գարդը կկազմեն ճարտարապետական հուշարձանները: Գործարարական և միջավայրը փոխադարձորեն լրացնում են, արժեքավորում և գեղարվեստական որակ հաղորդում միմյանց՝ դառնալով օրգանական ու փոխհարստացնող բաղադրիչներ: Զանրահայտ է, թե Գործ. Թումանյանն ինչպես էր փափագում Լոռու գեղատեսիլ ձորափոխներից մեկում գործերի ստեղծագործական տան կառուցումը կամ որքան էր երագում Մարցա ջրի եզրին մի համեստ կացարան ունենալ («որ կիսատ թողած գործերն ու ծրագրերն ավարտի»): Վերն արժարժված խնդիրները լուծելու համար պետք է առաջին հերթին գտնել շահագրգիռ կողմեր, հիմնավորել տեխնիկատեխնիկական առումով, մշակել Զայաստանում տուրիզմի և հանգստի կազմակերպման ինդուստրիան զարգացնելու հայեցակարգ, տարածաշրջանային հատակագծման մանրամասն նախագիծ ու աստիճանաբար գործողության մեջ դնել ծրագիրը: Տարիներ առաջ քայլեր արվել են, սակայն ծրագրված աշխարհը

տանք և եական տեղաշարժ չի կատարվել: Խոսելով Կովկասյան հանրագիտարան ստեղծելու հարցի շուրջ, Գործ. Թումանյանը նշում է Եվեյցարիայի, Իտալիայի, Ավստրիայի ստացած եկամուտները տուրիզմից և փոստանք է հայտնում, որ «Կովկասը, նրանցից ավելի ճոխ, հարուստ ու գեղեցիկ Կովկասը, Ալպերից շատ ավելի հզոր Կովկասը ոչինչ չի տալիս և մնում է տակավին անհայտ ու անծանոթ երկիր: Իհարկե, միշտ էսպես չի մնալու: Եվ ահա ժամանակն է»: Ըստ Թումանյանի Լոռին պետք է ճանաչվի ոչ միայն լռեցիների դյուցազնական ոգով, իր «իգիթներով», «ազդեհաներով», այլ և իր քաղաքակրթությամբ, մշակութային-ճարտարապետական գանձերով, և գիտական աշխարհի ու մտավորականության ուշադրությունն է հրավիրում դրա վրա. «Դեռ շատ պատմական տեղեր մեր հայրենիքում մնացել են անհայտ ոչ միայն գիտական աշխարհին, այլև մեր գրագետներին: Այդ դասին է պատկանում և Լոռին՝ շնորհիվ յուր անմատչելի, ամուր դիրքի, որ մինչև այսօր պահել է ժողովրդի դյուցազնական ոգին... և մեր աշխարհը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանասիրական, ճարտարապետական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերն ավերակների ու հողի տակ, իրենց արժանիքները մոռացության ու անհայտության մեջ»: Տավրը, Թումանյանից հետո ճանաչողության առումով Լոռին շատ բան չի փոխվել: Օրինակ՝ վերիններից շատե՞րն են ծանոթ Լոռու Մոսկոր կղզվոր տարածքին, որի գեղատեսիլ բնապատկերը, բուսական ու կենդանական հրաշալիքները, լեռնային կարկաչուն ջրերը, սառնորակ աղբյուրները, երկինք մխրճվող ձյունածածկ գագաթները, արժվաբնակ ժայռածերպերը, մեղմ ու կազդուրիչ կլիման, մարդու տեսողությունն ու լսողությունը, առողջությունն ու կենսագործունեությունը շոյող ու լիցքավորող բազմաբնույթ այլ գործոններ՝ շաղախված մարդու արարչագործությամբ ծնված, ողջ տարածքով մեկ սփռված բարձրարժեք և հիպպանչ հուշարձանների հետ, աստվածային հավակյություն պարզ են, որ, ցավոք, նվազ չափով են օգտագործվում: Զիմնախնդիրն անմիջականորեն վերաբերում է մշակութային արժեքների պահպանության դրվածքի լավացմանը՝ և՛ օրենսդրորեն, և՛ կազմակերպչորեն, և՛ գործնական առումով: Նկատի է առնվում առաջին հերթին ճարտարապետական հուշարձանների նորոգումը, ամրակազմում և վերականգնումը, ինչը հնարավորություն կտա դրանք ներառել երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ, ստեղծել տուրիզմի և հանգստի համակարգ, բարձրացնել դրա զարգացման շահագրգիռությունը, ուղղորդ դուրս բերել կանաչ ճանապարհ մասնակից դարձնելով շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին (նաև արտերկրից): Այսօր այդ խնդիրները դժվար լուծելի են, բայց օրախնդիր են ինչը պետք է կարևորել:


Գառնիկ ՇԱԽՅԱՆ,
ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ

Շիրագին տեսել են մի քանի անգամ: Երևանում, առօրյա կյանքում: Տեսել են, թե ինչպես են անցորդները հպարտության ու գորովի ներքին զգացումով կանգնել ու հայացքով ուղեկցել առյուծաբաշ այդ հանձարեղ երեխային: Տեսել են, թե ինչպես են ճանապարհի անցողիկների մոտ մեխվել ավտոմեքենաները և տաքարյուն վարորդները գլուխները հանել են մեքենայից ու արբունքի ժպիտով գամվել նրա թիքունքին, իսկ ճանաչողները ողջունել, մեկ-մեկ համարձակվել են կանգնեցնել նրան, ողջունյի ու անմիջական ջերմությամբ ողողված խոսքեր ասել: Բանաստեղծից որևէ միտք ու խոսք լսելու կարոտաբաղձ ակնկալությամբ: Ամբողջ Երևանը գիտեր նրան, ճանաչում էր, և նա, անկասկած, նման հանրնդհանուր սիրուց չէր նեղվում: Ընդհակառակը, թվում էր թե նա կենդանի հակառակը տեղի

ունենալու դեպքում: Շիրագը հպարտանում էր իր հանդեպ տածվող համաժողովրդական սիրուց և դա նրան ոգևորում էր, նաև պարտադրում միշտ հարազատ ազգի հետ լինելու, նրա առտնի դժվարին կյանքին հաղորդակցվելու, նրա ցավերի ու ոգևորումների արտահայտիչը հանդիսանալու: Բանաստեղծին վերջին անգամ տեսել են 1978-ի հունիսին, Երևանի գլխավոր հրապարակին հարող կենտրոնական (հետագայում՝ «Մանկական աշխարհ») հանրախառնօթի առաջին հարկում: Երևանյան տապամաշվա շոգ օրերին նախորդող առավոտյան զովաբույր ժամ էր: Գիշերով ջրված փողոցներից ու կոթողներից հովի նման մի բան էր կախվել օդում և մարդիկ պահ առաջ ձրգունում էին ընթել այդ հանգստացող օդը՝ օրվա գալիք շնչահեղձ լինելու չափ տապին ընդդիմանալու համար: Զանրախառնօթի

երեք մեծ շքադեղներից գնումների համար մարդիկ վարար ենրս ու դուրս էին անում: Գրեմական ու դպրոցական պիտույքների վաճառատեղանի մոտ սովորականից շատ էին ծնողները: Առևտուրն այստեղ աշխույժ էր նկատելի: ... Շիրագը, ինչպես միշտ, շրջապատված էր մարդկանցով: Խոսողը ինքն էր, շրջապատողները՝ ունկնդիր: Թե ինչի մասին էր խոսում կամ պատմում, ինձ հաստ չէր: Դեռու էի կանգնած և մոտենալու համարձակություն չունեի այդչափ: Ստեպ-ստեպ պատմողի խոսքը ընդմիջվում էր լիաբոց համընդհանուր ծիծաղով կամ ծափերով: Որոշ համարձակներ ևս մոտեցան այդ խմբին: Ելումուտ անողները նույնպես չէին ալարում մի պահ կանգնել, ժպտալ ու հետաքրքրապիրությանմբ հետևել նրա



«ՎԱԿՈՒՌՄ»

(էջեր օրագրից)

Կարպիս ՍՈՒՐԵՆՅԱՆ

5 հոկտեմբեր (1973թ.) - Վաղուց, երբ «Դևեր»-ի թարգմանությունն վերջնականապես արդեն հանվել էր պլանից այդ «գանձարահերի» պնդմամբ, թե Դոստոևսկու այդ վեպը «ռեակցիոն» է, Դորա Եսայանը առաջարկեց, որ Գոլսուորդիի «Ֆորսայթները» թարգմանեն (ինքն է հիմա այդ բաժնի վարիչը Պետիրատուն): Դժվարանում էի համաձայնվել, թեպետ գործնական առումով օգտավետ առաջարկ էր: Հի կարողանում հաշտվել, որ այդ քարը գցեցին «Դևեր»-ի գլխին: Ավարտելուց հետո այն՝ նույն թափով սկսած կլինեի «Պատանյակ» վեպը թարգմանել: Նպատակս էր այնուհետև վերաթարգմանել նաև «Ապուշը» և «Ոճիր և պատիժ» վեպերը, որով կյանքիցս տասը տարի նվիրած լինել թարգմանական արվեստին, կատարելով ամբողջական մի գործ Դոստոևսկու մեծ վեպերի հնգամատյանի հայացումը մի միասնական թարգմանական մոտեցմամբ, երեսուն տարի նրա աշխարհն ու արվեստն ընկալելուց և «Կարամազովների» թարգմանության հաջողությամբ էլ ամրապնդվելուց հետո: Չեղավ: Խանգարեցին, կոտրեցին թափս ու նպատակս:

Եվ առաջարկվում է թարգմանել «Ֆորսայթները»: Վիթխարի վիպաշար. երկու եռագրություն վեց վեպ, չորս միջերգանք վեպերի միջև: Պետք է անցնեն բոլորովին ուրիշ մի աշխարհ Անգլիա, մի ամբողջ գերդաստանի պատմություն, բազմաթիվ գործող անձեր տարբեր սերունդներից, այլազան հարակից հանգամանքներ: Թեպետ ներգաղթելուս պատճառով չփնձակվեց լինել Անգլիայում, բայց ինձ անձանթ չէ այդ աշխարհը, այլապես չէի էլ մտածի թարգմանելու մասին: Ծանոթ է ոչ միայն ընդհանուր մշակութային առումով, այնքան եմ կարդացել անգլիական գրականություն՝ թե՛ գեղարվեստական, թե՛ պատմական, թե՛ փիլիսոփայական և այլն: Ծանոթ է հենց կոնկրետ առումով էլ: Երբ տարիներ առաջ կարդում էի այդ վիպաշարի առաջին վեպն իսկ՝ *The Man of Property*-ն, աչքիս կենդանի պատկերանում էին անգլիացի ծանոթներս երբեմնի անգլիական գաղութ Կիպրոսում, սկսած Մելգոնյանում մեր անգլերենի հաջողական ուսուցիչներ Ջեքսոնից, Բրուսթրից, Գեյֆորդից և մանավանդ երաժշտական երեկոներն ամեն ուրբաթ օր Կիպրոսի ընդհանուր կրթական տեսուչ միսթր Քալլընի տանը, ինքն ու մի անկյուն նստած իր ընտանիքը, այդ երեկոներին հաճախող բազմաթիվ այլ անգլիացիներ, պատերազմի այդ օրերին զինվորականներ մեծ մասամբ, որոնցից երիտասարդ մեկ-երկու սայաի հետ մտերմացել էի նույնիսկ (մեկը Սպենդիարյանի երաժշտության սիրահար, որ հիշում եմ՝ Լոնդոնից ոչ հեռու Ռեդինգ քաղաքից էր), նաև անգլերեն պաշտոնաթերթի խմբագրատանը, ուր տանում էի ռազմաճակատային երկրների այն քարտեզները, որ ինձ պատվիրում էին գծել ու տպում էին թերթում: Հաճույքով էլ կարդացել էի այդ առաջին վեպը, առանձին հատոր, գրավիչ էր իր ուրույն գեղարվեստականությամբ, «անջինջ տպավորվել էին կենդանի պատկերներ:

Դորայի այդ առաջարկի օրերին Դոստոևսկու մասին մտահղացած գիրքս էի գրում՝ ռուսերեն: Ապրիլին, օգտվելով առիթից, երգչախմբի հետ նույն օդանավում գնացի Լենինգրադ (իմա՝ Պետերբուրգ), կրկին դոստոևսկիական մթնոլորտ վերապրելով՝ գրքիս համար, այցելելով նրա կյանքի և ստեղծագործության հետ կապված վայրերը այնտեղ և տուն-թանգարանը, ուր նվիրեցի «Կարամազովների» թարգմանություն: Անշուշտ, անպայ-

ման, գնացի նաև Էրմիտաժ՝ այս անգամ միայն Ռենբրանդտի համար, մոտ երկու ժամ նստեցի «Անառակ որդու վերադարձի» առաջ, կրկին տոգորվելու ինձ շատ հուզող այդ գլուխգործոցի հավերժ կենդանի ու բազմիմաստ խորհուրդով: Այնպես եղավ, որ Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայում էլ երգեցի սրտալիր հաճույքով՝ երգչախմբի երկրորդ համերգին տեղի սիմֆոնիկ նվագախմբի հետ, երբ նախօրոք ցանկություն էի հայտնել մասնակցելու փորձին ու վստահացել, որ տարիներ հետո դեռ լիովին, նուտա առ նուտա հիշում եմ բասերի մասներգը: Եվ ինչպե՞ս չխստովանեմ զոնե ինքս ինձ, որ հուզմունքից փուշ-փուշ եղա՝ բեմից «*Seid umschlungen, Millionen*»-ը երգելիս արական ձայների միահամուռ հնչողության մեջ, ասես ամբողջ հոգուս հետ երգում էր ամբողջ մարմինս էլ՝ ավելի քան երկու հազար դեմքերով լիովին այդ դահլիճի առաջ, որի պատմությունը մեծ արվեստի ոսկեմատյան է դեռ Լիստի, Բերլիոզի, Վագների օրերից, և ուր ի՞նչ ուրիշ ձայներ էլ են հնչել, հենց Դոստոևսկու ձայնն էլ, երբ նա իր երկերից ընթերցումով էր հանդես գալիս այս բեմում:

Հաջորդ օրը միտքս խռովեց մի բան, որին այն ժամանակ շատ կարևորություն չտվի կարծես, իսկ հետո, ահա կես տարի արդեն, դուրս չի գնացել մտքիցս ու ավելի է խռովել...

Ետկինդի տանն էի, մտերմորեն գրուցում էինք իր աշխատասենյակում: Մի քանի օր առաջ հեռախոսով հայտնել էի իրեն, որ Լենինգրադում եմ, ուրախացել էր, եկել համերգներին, իսկ երգչախմբի մենահամերգի երեկոյան, երբ ես դահլիճում էի, հանդիպել էինք, և ես, նախօրոք հեռախոսով պայմանավորված, տվել էի իրեն գրքիս արդեն գրված ու իրեն ներկայացնելու համար հստակ ձեռագրովս մաքրագրած մոտ քառասուն մեծադիր էջերը, իր կարծիքը խնդրելով: Եվ ահա ասում էր, որ շատ է հավանել, կրկնելով, հատկապես, դեռ Յալթայում մեր գրույցների ժամանակ ասածը, թե Հոբին առնչելու տեսակետս նորություն է թվում իրեն, կարևոր, չի հանդիպել ուրիշ տեղ: Այսպիսի մի գրքի գաղափար խրախուսել էր այն ժամանակ, թե անպայման զրեմ, իսկ այժմ ահա՝ թե բարվոք ավարտեմ, ինձ կծանոթացնի դոստոևսկիագետ Ֆրիդլենդերի հետ: Լեզվական առումով խորհուրդ տվեց, որ խուսափեմ ռուսերենում հաճախ օգտագործվող գերադրական ձևերից. լավ խորհուրդ էր:

Հետո՝ մեր կրկին հանդիպման համար իր մոտ արդեն, իր տանը, այնպիսի ուրախություն հայտնեց, թեև խորապես անկեղծ, անշուշտ, խոսքերն էլ մեղմաշեշտ ու լուրջ, ինչպես միշտ, բայց մի քիչ զարմանալի թվաց ինձ այդպիսի ուրախությունը: Թվաց մի տեսակ չափազանցյալ նույնիսկ: Բայց իր այդ մտերմորեն սիրալիր ժպիտի խորքում, կանոնավոր դիմագծերով ակնոցավոր ու մի քիչ գունատ թխավուն դեմքին, ասես թաքուն մի տրամություն էլ գզացի, մանավանդ որ դուրսը մռայլ էր եղանակը, և ամեն կողմ գրքերով լի սենյակն էլ գրեթե կիսամութ: Նրան վերջին անգամ տեսել էի Երևանում անցյալ տարի՝ հոկտեմբերին, երբ եկել էր թարգմանության հարցերով «Համամիութենական գիտական կոնֆերանսին» մասնակցելու: Իսկ դեմքն այժմ, մի տարի հետո, ավելի կնճռոտված թվաց աչքիս: Ծխում էր շարունակ, ես էլ հետը: Հիշեց երևանյան մեր այդ «արևոտ» օրերը, միասին պտույտները քաղաքում և էջմիածինը, ուր խոր տպավորություն էր ստացել հատկապես Հռիփսիմեի տաճարից, Գառնին ու Գեղարդը, իմ «անմոռանալի հոգևոր երգը» վիմափոր

«ԻՄ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔՆ Է»


Մարտիրոս Սարյանի մի հարցազրույցը

Մուսկվայի «Երիտասարդ գվարդիա» հրատարակչությունը 1969 թ. լույս է ընծայել հարցազրույցների մի գիրք՝ «Ձեզ պատասխանում է արտիստը» խոսույն վերնագրով:

Արվեստի, կյանքի, իրենց վարպետության «գաղտնիքների», ստեղծագործական ճակատագրերի ու պլանների մասին են զրուցում արվեստի ամենատարբեր բնագավառների խորհրդային և արտասահմանյան այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Դմիտրի Շոստակովիչը, Նատալյա Բեսսմերտնովան, Արկադի Ռայկինը, Դոնատաս Բանիոնիսը, Յարություն Յակոբյանը, Ռոբուել Զենտը, Մարչելո Մաստրոյանին և շատ ուրիշներ:

«Նեղեյա» շաբաթաթերթից ծաղկաքաղված այս ուշագրավ գիրքը բացվում է աշխարհահռչակ Մարտիրոս Սարյանի լուսանկարով, «Իզվեստիայի» հատուկ թղթակից Ա. Պլուտնիկի «Իմ երջանկությունը կյանքն է» խորագրով ուսանելի խոսք ու զրույցով, որն էլ թարգմանաբար ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

Առաջինը ծայն է խնդրում ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, Լենինյան մրցանակի դափնեկիր Մարտիրոս Սարյանը: Գեղեցիկ է նրա դեմքը՝ ուղղանկյունաձև բարձր ճակատով, անհնազանդ ցրված երկար, ճերմակ մազերով: Ցնցող են չորուկ, ջլուտ ձեռքերը, որոնք հիշեցնում են գառիթափի եզրին աճած ծառերի արմատներ...



Self-Portrait with Mask. 1933

- Մարտիրոս Սերգեևիչ,- տալիս ենք առաջին հարցը, Դուք ինչպե՞ս հավատացիք նկարչի Չեր կոչմանը:

- Ես պարզապես աշխատում էի: Ոմանց գրգռում էի, ոմանց ուրախացնում: Բայց, իմ կարծիքով, նկարիչը ծնվում է հենց մարդու մեջ, իսկ մարդ պետք է հավատա այն ամենին, ինչ ասում կան անում է: Ամենագլխավորը սա է: Գործի հանդեպ ձգտումը պետք է ապրի մարդու ներաշխարհում, այլ ոչ թե նրանից դուրս: Իր եությանը է մարդ ընկալում ամբողջ աշխարհը, և ամբողջ աշխարհն էլ արտացոլվում է նրա մեջ: Ուստի ամեն ինչ և՛ օգտակար կարող է լինել, և՛ վնասակար՝ նայած թե ինչ են «կորզում» կյանքից: Յուրաքանչյուր մարդ աշխարհ նվաճող է: Ատելությամբ աշխարհ չես նվաճի. պատմության մեջ քիչ չեն դրա ապացույցները: Այն սիրով պետք է նվաճել: Ես սկսել եմ որպես աշխարհը սիրող նկարիչ և ձգտում եմ միշտ հավատարիմ մնալ այդ սկզբունքին:

- Գիմա ենք հասկանում, թե Չեր կտավներում ինչու այդքան արև կա:

- Հայ ժողովուրդը շատ գրկանքներ ու տառապանքներ է կրել, բայց երբեք չի կորցրել ստեղծագործելու ոգին: Դրանով մենք ներկայացել ենք որպես մեր մեջ առաջ ընթանալու ուժեր ունեցող շնորհալի ժողովուրդ: Իսկ ես իմ ժողովրդի գավակն եմ:

- Չեր նկարներով հիանում է աշխարհը. դա փառք է, ճանաչում: Նկարչի համար, սակայն, այդ ճանաչումը, սեփական ստեղծագործությունները որպես կատարելության մարմնացում ընդունելու և իրեն կրկնելու առումով վտանգ չունի՞ արդյոք իր մեջ:

- Ես համարյա ինձնուս տարեկան եմ, բայց ավելի շատ մտա-

ծում եմ ապագայի, քան անցյալի մասին: Ստեղծագործությունը ոչ թե փառքի հետամտում է, այլ մարդկանց, առարկաների ու երևույթների էությունն ըմբռնելու անհաղթահարելի ցանկություն: Նկարչի մեջ պետք է լինի ինչ-որ հաստատում մի բան, որ ոչ մի ազդեցության չենթարկվի անկախ այն բանից՝ գովո՞ւմ են նրան, թե՞ կշտամբում: Ես կասեի, որ ստեղծագործությունն աշխարհին սևեռված հայացք է: Չեմ կարող ներել ինձ, որ այսքան քիչ եմ ստեղծել: Ծույլ եմ եղել. կարող էի ստեղծել հարյուր անգամ ավելի շատ:

- Ձեզ համար, հավանաբար, ամենաերջանիկ օրերը եղել են, երբ կարողացել եք շա՞տ գործ անել:

- Ամենաերջանիկն ինձ համար իմ ծննդյան օրն է: Ծնվելն ինքնին երջանկություն է: Ես ինձ համարում եմ երջանիկ մարդ: Ոչ փողոց է իմ երջանկությունը, ոչ ծառայությունը, այլ հենց ինքը՝ կյանքը: Ես շատ եմ սիրում ապրել... Աստվածացնում եմ մայրերին. նրանք ծնելով մեզ՝ մեծագույն երջանկություն են պարգևում: Եվ եթե մարդիկ կյանքում ոչինչ չեն գտնում, եթե նրանք այնքան բժբախտ են, որ իրենց մեջ սպանում են կյանքը, ապա դա ահավոր մոլորություն է, հրեշավոր սխալ:

- Չեր խոսքերից դատելով՝ Դուք ընկեր եք անվանում նրան, ով մարդու մեջ պահպանում է կյանքում այրումով, կրքով ապրելու ցանկությունը:

- Ես հավատում ու սիրում եմ մարդկանց: Նրանց հանդեպ թըշնամական վերաբերմունք չունեմ, չարացած չեմ: Բայց առանձին մարդկանց նկատմամբ յուրահատուկ թուլություն ունեմ: Եվ ընկերներ եմ անվանում հատկապես նրանց, ում նկատմամբ նման թուլություն ունեմ, առանց որոնց իմ կյանքը չեմ պատկերացնում: Ցավոք, ես անձամբ իմ բոլոր ընկերներին ծանոթ չեմ. շատերն ապրում են ինձանից հեռու: Նրանք հասարակ ջուլհակուժիկներ են, քարագործներ, ծովագնացներ: Գիտեմ, եթե հանդիպեմ նրանց, անպայման կգտնեմ բարեկամներիս: Երբ ինչ-ինչ պարագաներ միանում են, մարդու մեջ զարթնում է թաքնված ինչ-որ բան: Ինչպե՞ս և ե՞րբ է դա լինում, դժվար է ասել: Յուրաքանչյուրի մոտ յուրովի է՝ կան երջանկության մեջ, կան՝ դժբախտության: Բայց չի կարելի ձեռքից բաց թողնել բարեկամին ճանաչելու և ոչ մի պահ. հետո շատ են գոջում, բացի այդ՝ ներաշխարհը է չափազանց աղքատանում...


- Ի՞նչն եք Դուք անվանում նկարչի ներաշխարհ: Որտեղի՞ց է գալիս այդ աշխարհը, ինչպե՞ս է այն ձևավորվում:

- Մենք սովորում ենք, զբոսանում, աշխատում, հանդիպում ընկերների, ուսուցիչների, անցորդների: Շատ բան ենք տեսնում ու լսում: Կյանքի և ոչ մի կողմը (արտահայտությունը) հենց այնպես չի անցնում մեր գիտակցության կողքով: Մեր հոգում միշտ ինչ-որ բան է մնում: Յուրաքանչյուրը վերցնում է այն, ինչն իրեն պետք է, ինչ ունակ է վերցնելու: Ընդունակ մարդը նկատում է ավելին: Նրա հոգին ավելի շատ է հարստանում: Արվեստագետի համար նման հարստությունը ոչ թե շռայլություն, այլ անհրաժեշտություն է. նա ոչ միայն ինքն իրեն, այլև շրջապատին է «ազդարարում» կյանքի մասին՝ նկարներով, գրքերով, ճարտարապետական կառույցներով:

- Որպեսզի կյանքը վերարտադրվի նկարի, քանդակի, գրքի միջոցով, ոչ միայն տաղանդ, այլև հսկայական համբերություն է պահանջվում: Գյոթեն անգամ գտնում էր, որ համձարն ամենից առաջ համբերությունն է: Նկարիչն արդյոք պե՞տք է աշխատի նաև այն օրերին, երբ հոգեպես տրամադրված չէ դրան:

- Նման օրերին ես չեմ աշխատում: Բայց ընդհանրապես անհրաժեշտ է աշխատել որքան հնարավոր է շատ: Առանց աշխատանքի ոչինչ չի ստացվի. մարդու հոգում կփտի ամեն ինչ՝ դիտումներ, զգացումների պաշարները: Պետք է հասկանալ աշխատանքի մեծ երջանկությունը, հարմարվել այդ երջանկությանն ու չհրաժարվել դրանից: Ես ամեն օր չեմ աշխատել, աշխատել եմ միայն այն օրերին, երբ իմ մեջ «շարժվել է» բերկրանքը, երբ առաջացել է նկարելու պահանջ: Մտնելով ստեղծագործական աշխարհ՝ մարդ ամեն ինչ մոռանում է: Դժվար է խոսել ստեղծագործության մասին. կարելի է երևակայել, ստել, բայց ճշգրտորեն վերարտադրել սեփական զգացումները, համարյա անհնարին է...

Ստեղծագործական լարվածությունը շատ բան է խլում մարդուց: Իսկ մարդիկ այդ ջանքերի մասին դատում են ռեալապես՝ ստեղծագործական պրոցեսի արդյունքով, այն բանով, թե ստեղ-



Aragats, 1925

ժագործողն ինչ է տեսել այս արտասովոր աշխարհում, հետաքրքրական է դա, թե՞ ոչ, հարկավոր է, թե՞ ոչ:

Կցանկանայի դեռ շատ անգամ մտնել այդ արտասովոր աշխարհը, աշխատել այնտեղ և այնտեղից ձեռնունայն չվերադառնալ:

- Չեր ողջ կյանքում Դուք շրջել եք աշխարհը, Չեր աչքերի առջև է պատմությունն իր դրամաները «խաղացել», Չեզ բնորդել են մեծ մարդիկ, հզոր բնությունը: Ե՞րբ և ինչո՞վ է կյանքն ամենից շատ զարմացրել Չեզ, ի՞նչ հրաշքի եք ականատես եղել:

- Ես ման հրաշքներ տեսել եմ այնքան, որքան անգամ հանդիպել եմ բարի մարդկանց, բարությանը: Այդ հանդիպումներն ինձ միշտ լուսավորել են: Մարդկային ամենակարևոր արժանիքը բարությունն է: Բարին լույսն է, բարին մարդու առաջատարն է: Բարությունն ստեղծարար է: Թե՛ գիտության, թե՛ արվեստի ամենահանձնարեղ հայտնագործությունները նրանով են կատարվել: Իսկ չարությունը դրանցից մի քանիսի մեջ «ներմուծում» է շահը: Ինչո՞վ է մարդուն գայթակղում չարը, ինչպե՞ս է կարողանում նրան պահել իր ճիրաններում: Միայն մութ գործը, շահը: Բնությունը մարդուն կյանքի է կոչել և յուրաքանչյուրին օժտել խելքի և իմաստության որոշ բաժնով, ու պետք չէ չարությանը հակադրվել բնության պարզևս բարուն: Կյանքը պետք է օգնի մարդուն մշտապես մնալու բարու շրջանակներում: Երբեմն, երբ վատ տրամադրություն ենք ունենում, մտածում ենք, թե կյանքը միօրինակ է, թե օրերը կրկնվում են: Ամենևին էլ՝ ոչ: Մենք պարզապես չենք հասկանում, թե որքա՞ն երջանիկ ենք, երջանիկ նրանով, որ ապրում ենք այսպիսի մեծ, հիասքանչ երկրում, որ մեզ արևն է առաջնորդում, և արևի շնորհիվ ենք զգում հավերժությունը, զգում, որ աշխարհն անվերջ է: Չնայած մարդուն վիճակված է ապրել որոշակի թվով տարիներ, բայց նա իր կյանքով զգում է հավիտենականությունը՝ ասես թե միշտ ապրել է ու պիտի ապրի: Կյանքի ընթացքն այնքան լավ է, այնքան հրաշալի, որ մենք չենք վախենում մահից: Ի՞նչ լավ է, որ մեր մահից հետո էլ արև է լինելու: Մի՞թե հրաշք չէ արևը՝ մշտապես հուրիբացող, այդ փոքրիկ լուսատու գունը: Նրա հավիտենությունը ոգևորում է: Մենք հավատում ենք կյանքի ջերմությանը, հավատում ենք մարդկային տաղանդին: Հիանալի է, որ մեր կյանքը լի է մեզ մեծ մարդասիրության կոչող կոմունիստական լուսավոր գաղափարներով:

- Ինչպե՞ս եք վերաբերվում դասական ու ժամանակակից արվեստներին:

- Ես արվեստը չեմ բաժանում ժամանակակիցի և ոչ ժամանակակիցի: Տաղանդավոր ստեղծագործությունները դուրս են գալիս ժամանակի սահմաններից, վատն արագ մեռնում է: Ամեն ինչի լավն իմ ճաշակով է:

- Գոյություն ունի կարծիք, ըստ որի ինչպես գիտական, այնպես էլ մշակութային առաջընթացի շարժիչ ուժը համարվում է մարդկային ինքնասիրությունը: Դուք կի-

սո՞ւմ եք նման կարծիքը:

- Դժվար հարց եք տալիս: Այդ մասին պետք է հարցնել փիլիսոփաներին, իսկ ես նկարիչ եմ:

- Բայց մի՞թե Չեր կտավները հագեցած չեն փիլիսոփայական մտորումներով:

Սարյանը մտախոհ է դառնում, «ընկղմվում» բազկաթռի մեջ, գլուխը հակում... Ի վերջո խոսում է.

- Դուք, թերևս, իրավացի եք: Ես իսկապես աշխատում եմ խորհել... Բայց մարդն այնքա՞ն վատ է ճանաչում ինքն իրեն, իր հնարավորությունները (նույնիսկ այն մարդը, ով մտորելու փորձ ունի):

...Հիշում եմ, նկարել եմ բանաստեղծ Եղիշե Չարենցի դիմանկարը: Ինձ թվում էր, թե հենց այնպես, առանց որևէ նպատակի եմ պոեզի դեմքի հարևանությամբ կտավին «տեղադրել» ինձ համար սիրելի եգիպտական դիմակը: Տարիներ անց միայն հասկացա, թե ինչու եմ այդպես վարվել. հավերժություն մարմնավորող դիմակի դատարկ ու անտարբեր (սառը) աչքերը ստվերակում են բանաստեղծի աչքերի ոգեշունչ փայլը: Հասկանո՞ւմ եք՝ նկարիչն ինքը, ենթարկվելով ներքին պոռթկմանը, երբեմն չի կարողանում մինչև վերջ ըմբռնել իր իսկ ներքին մղումները... Դուք կարծես խոսում էիք ինքնասիրության՞ մասին. ինքնասիրություն կարող է ունենալ նաև ոչ խելացի մարդը, նաև՝ ապաշնորհը:

- Հանձն կանե՞ք ապացուցելու, թե ինքնասիրությամբ հանճար չեն դառնա:

Սարյանը ծիծաղում է.

- Իրոք, այդպես է: Ստեղծագործելուն ավելի շատ մղում է մարդկային հպարտության ներքին զգացումը: Մարդը բանական, հպարտ արարած է... Նա կյանքի շունչն ու հոգին է, կյանքի իմաստը: Ցավալի է, որ մարդ ինքն իրեն վատ է ճանաչում: Ով հետաքրքրվում է իրենով, նա էլ արարում է:

- Տարիների ընթացքում ամեն մարդ (ստեղծագործողը և) ձեռք է բերում բազմաթիվ սովորույթներ. դրանցից մի քանիսն օգնում են նրան, մի քանիսը՝ խանգարում: Ունե՞ք արդյոք որևէ սովորույթ, որի համար զղջում եք:



Lotos, 1911

եվ հակառակը՝ ո՞ր սովորույթներն եք համարում օգտակար (արժեքավոր):

- Հարգում եմ այն սովորույթները, որոնք մարդուն կամքի ուժ են տալիս: Օրինակ՝ ֆիզկուլտուրայով, սպորտով զբաղվելը: Սպորտը երիտասարդների համար լուրջ գործ է: Այն օգտակար է և մարդու մեջ չի մեռցնում ստեղծագործական ուժերը, չի կոդպատում նրան: Գիտեք, չէ՞, որ հին Հունաստանում սպորտը դիտվել է որպես բնական գեղեցկություն ստեղծելու մի միջոց: Բայց շատ սովորույթներ... կամքի թուլությունից են. ասենք՝ ծխելը: Առաջ ես էլ էի ծխում (կյանքում ո՞վ չի արել նման հիմարություն), բայց թողցի: Ահա՛ ոչ թե կամքիս, այլ հիշողությունիցս են ուզում գանգատվել: Թուլացել է հիշողությունս. մոռանում եմ անգամ, որ նկարիչ եմ: Քիչ եմ աշխատում, իսկ աշխատելուց եմ անընդհատ, առանց շունչ քաշելու: Ուզում եմ ապրել, դիտել, ուրախանալ, ճանաչել և կյանքը վերարտարել կտավի վրա: Պաշտում եմ երկիր մոլորակը և շարունակ մտածում եմ, թե մարդկությունն ինչպես է վարվելու նրա հետ... Բնությունն արարել է մարդուն, որպեսզի նա քայլի տարածության ու հավերժության մեջ, որպեսզի նրա միջոցով հարատևի:

Թարգմանեց Նիկոլայ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԸ

«Տաշիր» առևտրաարդյունաբերական միավորման փոխնախագահ Վարուժան Արտեմյանի նախաձեռնությամբ և հովանավորությամբ տպագրության և պատրաստվում հռչակավոր լրագրող և հոգեբան-փիլիսոփա Նապոլեոն Հիլի «Մտածիր և հարստացիր» աշխատությունը: Մինչ ընթերցողի սեղանին կդրվի այդ արժեքավոր գրքի հայերեն հրատարակությունը, մեր անագիքը կփորձի հատվածաբար իր ընթերցողին ներկայացնել տպագրության նախապատրաստվող գրքից որոշակի հատվածներ:

- *Գրքի հայերեն հրատարակության ծրագիրը վաղուց է հղացել իմ մեջ, - պատմում է Վարուժան Արտեմյանը: - Այսօր հրատարակչական գործի շուկան ընթերցողին է հրամցում բազմաթիվ աշխատություններ՝ շքեղ ձևավորումներով և հնչեղ, խոստումնալից անվանումներով՝ նվիրված մարդկային գործունեության հոգեբանորեն բարդ և դժվար հասկանալի խնդիրներին, որոնց ընկալումը զգալիորեն կարող է հեշտացնել մարդու խնդիրը իր առջև ծառայած խճողված հանգույցները քանդելու և գործի ընդհանուր արդյունքում հաջողություն ապահովելու հարցերում: Մակայն ես հավատացնում եմ, որ Նապոլեոն Հիլի գիրքը այդ շարքում ունի առանձնահատուկ արժեք, որովհետև այն գրված է տաղանդավոր լրագրողին հատուկ պարզ և պատկերավոր, գեղարվեստորեն համեմված լեզվով և, որ կարևորն է, հիմքում ունի ոչ միայն լրագրողի հարուստ կյանքի, այլև հաջողության հասած բազմաթիվ նշանավոր մարդկանց կյանքի և գործունեության փորձը: Գրքի՝ իմ ընկալումների մասին, ես իհարկե, ավելի համաձայնորեն կխոսեմ նրա առաջին հայերեն հրատարակության առաջաբանում, իսկ այժմ ես միայն ուզում եմ ասել ընթերցողին, որ այն դրական ազդեցությունը, որ ես ստացել եմ այդ գրքի ընթերցումից, ինձ համար եղել է վճռորոշ, եթե չասեմ ավելին: Աշխատանքային գործունեության մեջ հասած իմ համեստ ձեռքբերումներով ես որոշակի չափով պարտական եմ նաև այդ գրքից ստացած արժեքավոր դասերին: Համոզված եմ՝ այս գիրքը անփոխարինելի ուղեցույց և խորհրդատու կարող է լինել հատկապես այն երիտասարդների համար, որոնք պատրաստվում են կյանքում սկսել իրենց ինքնուրույն գործը կամ էլ ծրագրում են առաջխաղացումներ իրենց պաշտոնավարման ասպարեզում:*

Ցանկացած պատեհ առիթի դեպքում ես կրկին թերթում եմ այս գիրքը, վերընթերցում առանձին հատվածներ ոչ միայն վերհիշելու, այլև կրկին անգամ կրելու այն դրական և ներգետիկայի ազդեցությունը, որ հորդում է նրա էջերից:

Նապոլեոն Հիլ

ՄՏԱԾԻՐ ԵՎ ՀԱՐՍՏԱՑԻՐ ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքի յուրաքանչյուր գլխում ես կպատմեմ այն մասին, թե ինչ հաջողությամբ կարելի է դրան վաստակել, այն գաղտնիքների մասին, որոնք օգնել են հարստանալու հարյուրավոր մարդկանց: Երկար տարիներ ես զբաղվել եմ նրանց գործունեության վերլուծություններով:

Այդ գաղտնիքի մասին առաջին անգամ ես իմացա ենդրոյու Կարնեգիից՝ ավելի քան հիսուն տարի սրանից առաջ: Այդ սիրալիկ և հմայիչ ծերուկն ինձ դեռևս մատուցեց պատմական, պատմեց դրա մասին բոլորովին պատահական մի առիթով: Դրանից հետո նա հանգիստ փլվեց փափուկ բազկաթոռի մեջ և աչքերի կրակոտ նայվածքով սկսեց ուշադիր զննել ինձ՝ արդյո՞ք ես այնքան խելք ունեմ, որպեսզի կարողանամ գնահատել ասված խոսքերի ողջ արժեքը:

Նկատելով իմ աշխույժ հետաքրքրությունն ասված խոսքերի նկատմամբ, նա հարցրեց ինձ, թե արդյո՞ք պատրաստ եմ ես նվիրելու քսան, զուցե և ավելի տարիներ՝ նախապատրաստելու ինձ՝ ամբողջ աշխարհով մեկ տարածելու հաջողության այդ գաղտնիք-բանաձևը՝ հանուն այն մարդկանց, որոնք չիմանալով այն, կարող են ամբողջ կյանքն ապրել անհաջողակ գործի ծանր հոգեբանությունը իրենց մեջ պահած: Ես ասացի, որ պատրաստ եմ ու պահեցի այդ խոստումը:

Միտար Կարնեգիի մտքերից ծնված այդ կախարդական բանաձևն էլ, որ հսկայական հաջողություններ է բերել նրան, պետք է դառնա գործունեության զինամիջոց այն հարյուրավոր մարդկանց համար, որոնք պարզապես չունեն ժամանակ՝ դրան վաստակելու գործի պրպտուն և քրտնաջան ուսումնասիրությունների համար: Կարնեգին հուսով էր, որ ես կկարողանամ ստուգել և փորձարկել իր ասած մտքերի ճշմարտությունը և բացատրել այն տարբեր մարդկանց՝ ցանկացած սեռի, տարիքի և մասնագիտության: Նա գտնում էր, որ այդ գիտությունը պետք է դասավանդել բոլոր դպրոցներում և թուլեցներում, և, որ դրա դասավանդումը արժանական փոփոխություն կբերի ողջ կրթության համակարգում՝ ամենվազն կիսով չափ կրճատելով ուսուցման ժամանակահատվածը:

Հաջողության բանաձևն անցել է գործնական փորձարկման ճանապարհ

Հավատի մասին գլխում դուք կծանոթանաք Չարլզ Մ. Շվաբի գարնանահրաշ պատմությանը, որը տակավին երիտասարդ տարիքում կարողացավ ստեղծել «Յունայտեդ Ստեյթս Սոիլ» հսկա միավորումը: Այդ օրինակով էլ հենց միստր Կարնեգին

եկավ այն համոզման, որ հաջողության բանաձևը կարող է գործել բոլոր նրանց համար, ովքեր ուղղակի պատրաստ են հասկանալու այն: Դրա գործնական կիրառումը միստր Շվաբին բերեց ապշեցուցիչ հաջողություն՝ 600 միլիոն դոլլարի կարողություն:

Բուլդոզի հայտնի այդ փաստը (ովքեր ծանաչում են միստր Կարնեգիին) հրաշալի օրինակ կարող է ծառայել նաև բեզ ընթերցող, մի պայմանով միայն՝ եթե դու գիտես, թե ի՞նչ ես ցանկանում:

Այդ գաղտնիքը հայտնաբերել և իրենց հաջողություններին են ծառայեցրել հարյուրավոր գործնական տղամարդիկ և կանայք այնպես, ինչպես մտածել և պլանավորել էր դա միստր Կարնեգին: Ոմանց հաջողության այդ ժպիտը բերել է կարողություն: Ուրիշները դրա օգնությամբ կարգավորել են իրենց անձնական գործերը: Նույնիսկ մի հոգևորական այն կիրառել է այնպիսի արդյունավետությամբ, որ իր տարեկան եկամուտը գերազանցել է 75 հազար դոլլարի սահմանը:

Արթուր Նեշը՝ սովորական մի դերձակ Ցինցինաստիից, կիրառեց հաջողության բանաձևը փորձադաշտ ծառայած սնանկացած իր փոքրիկ ձեռնարկությունում: Եվ գործը, ինչպես ասում են, կպավ և բերեց նրան հսկայական հարստություն: Այն հիմա էլ ծաղկում է, սակայն արդեն ցավոք՝ առանց միստր Նեշի: Այդ փորձը այն աստիճան ինքնատիպ է, որ թերթերն ու ամսագրերը միլիոնավոր դոլլարներ են ծախսել իրենց խանդավառ վերլուծությունների համար:

Հաջողության գաղտնիքը բացվեց և Տեխասի նահանգի Դալլաս քաղաքի բնակիչ Ստյուարթ Օստին Ուայերի համար: Նա պատրաստ էր հաջողությանը այն աստիճան, որ կտրուկ թողեց իր մասնագիտությունը և սկսեց ուսումնասիրել իրավագիտություն: Հասա՞վ արդյոք նա իր նպատակին, թե ոչ, այդ մասին նույնպես կիմանաք այս գրքում:

Լասսալի համալսարանում գովազդի գործակալ աշխատելու տարիներին ես հուշեցի այդ բանաձևը հաստատության ռեկտոր Ջ. Գ. Չապլինին, և որի կիրառումով էլ այդ ուսումնական հաստատությունը դարձավ լավագույններից մեկը երկրում՝ իր էքստենսիվ զարգացող ուսումնական համակարգով:

Այդ գաղտնիք-բանաձևը, ինչի մասին խոսք է գնում, գրքում հիշատակվում է ավելի քան հարյուր անգամ: Այն չունի որոշակի անվանում, ես չեմ էլ մտածել այդ մասին:

Ակներև բաները չունեն ազդեցության մեծ ուժ, առավել ազդեցիկ են գաղտնիքով պարուրված մտքերը, որի պոչը բռնելով մեքենա հնարավորություն ենք ստանում ցուցադրելու-բախանցելու և գաղտնիքը բացելու մեր կարողությունները: Գուցե այդ պատճառով էլ ենդրոյու Կարնեգին չէր պարտադրում իր մտքերը և չէր բացում դրանք շղարշող վարագույրները:

շրջանավարտներին բակավարի աստիճան շնորհելու արարողության ժամանակ ելույթ ունենալու համար: Այդտեղ ինձ շնորհվեց նաև գրականության պատվավոր դոկտորի աստիճան:

Իսկ Ձեռնհինգս Ռեթյուֆի ճակատագրին ես հետևում էի հենց 1922 թվականից սկսած: Նա դարձավ առաջավոր ազգային ավիաընկերություններից մեկի կառավարիչը, փայլուն հռետոր և սենատոր՝ ընտրված Արևմտյան Վերջինիս նահանգի կողմից:

Ուշադրության արժանի մտքեր

- Կարևոր չէ՝ ինչպես եք այսօր հագնված, և ինչքան փող կա ձեր գրպանում: Քանի որ, ինչպես եղվին Բարնսը, հաջողության հասնում է նա, ով նպատակասլաց ձգտում է դրան:
- Որքան երկար եք չարչարվում հաջողության հասնելու համար, այնքան այն ավելի է մոտենում ձեզ: Շատ-շատերը թողնում են գործը՝ այն հաջողությամբ ավարտելուց ընդամենը մի քայլ

առաջ:
Հիշեք՝ այդ քայլը ձեր փոխարեն կանեն ուրիշները:
- Նպատակասլացությունը փորձաքար է ցանկացած նվաճման համար՝ լինի այն մեծ թե փոքր: Ուժեղ տղամարդը պարտություն կարող է կրել նպատակասլաց երեխայի կողմից: Փոխեք ձեր կարծիքը ինքներդ ձեր մասին և կհասնեք այն ամենին, ինչն այսօր անհասանելի երազ է միայն թվում ձեզ:
- Ձեր հավատն ու վճռականությունը ներշնչեք ուրիշների, ինչը արեց իր ժամանակին Չեմրի Ֆորդը, դուք կհասնեք անհմարին թվացող գործերի իրականացմանը:

Այն ամենը, ինչը կարելի պատկերացնել և ցանկանալ, հասանելի է:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց՝ Կորյուն ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԸ

89

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

շարժումներին կամ խոսքին, ապա դժկամությանը բաժանվել ցանկալի այդ շրջապատից. առօրյա հոգսերն ու աշխատանքը ավելորդ ռուպեններ չէին տրամադրում...
Միանգամից, ձեռքի մի շարժումով Բանաստեղծը մեկեն ճեղքեց իրեն խիտ շարքով շրջապատողների օղակը և քայլերն ուղղեց գրեմական պիտույքների վաճառաստեղանի մոտ խռնված մարդկանց կողմը: Բարետես միջահասակ մի կին իր երեք մանկահասակ երեխաներով մոտեցել էր վաճառաստեղանին ու զբաղված էր ամիրա-ժեշտ պիտույքներ ընտրելու, ապա և դրանք գնելու գործով: Գյուղացի էր անկանակա՞ծ կամ, լավագույն դեպքում, երևանին հարող շրջաններից: Դա նկատելի էր նրա և՛ վարվելաձևից ու շարժումներից, և՛ համեստ հագուստից ու երեխաների ամաչկուտ-պլշած, ամեն ինչ ակնապիշ տնտղող հայացքներից: Նաման, իրենց շրջապատին խորթ այս միջավայրի օտար շնչից երեխաների անելանելի պահվածք-դիրքը ավելի էր գեղեցկացնում ու ընդգծում նրանց անոթխած գեղեցկությունն ու տեսքը: Շրջապատի եռուզեռին ակնապիշ հետևող երեխաների հայացքները իրարից անկախ, գատ-գատ կտրվում էին մեկեն և ուղղվում մոր կողմը, ստուգելու համար նրա առկայությունը իրենց կողքին. հանկարծ մայրիկը չնոռանա՞ իրենց ներկայությունը և գնա, իրենց թողնելով, ճիշտ է՝ հետաքրքիր, բայց լրիվ օտար այս միջավայրում: Ապա հավաստիանալով մոր ներկայությունով, նրանք նորեն շարունակում էին հետաքրքրասեր ու պապակ հայացքով տնտղել շուրջօրվորը:

Իրենց թիկունքում լսելով բանաստեղծական այս երգեցիկ տողերը, գնումներ անող մարդիկ շրջվեցին ու հետաքրքրություն սկսեցին դիտել տեսարանը: Շրջվել էր և երեխաների մայրը: Անկասկած, ճանաչել էր Բանաստեղծին ու, հավանաբար, ապշանքի կամ երջանկության ճիչը իր մեջ խեղդելու համար ավուժ ծածկել էր բերանը ու սառել-մնացել:
Շիրազը թեքվեց թևի տակ ծվարած երեք երեխաներից միակ աղջնակի կողմը, որ արտակարգ գեղեցիկ ու լուսերես էր և ամոթխած ու շիկնած իր մատիկներն էր ազուցում-բացում, և դիմեց նրան ցածրաձայն.

- ...
- ...
- Մարիամի՛կ: Վա՛հ: Հիսուս Քրիստոս...
Դու Մարիամ Աստվածածո՞րն ես: Ի՛նչ քաղցրիկ անուն է: Ապրի՛ս, Մարիամի՛կ, խելոք իմ բալիկ... Եսիզ էլ քու ախպերի՛կդ է...: - Աղջնակը թողվեց հակած գլխով:
Շիրազը այս անգամ մեծավարի դիմեց մանչիկն.
- Ախպերի՛կ, անունդ ի՞նչու է...
- Միերիկ՝ Պետրոսյան, - անվախ ու զորնգուն նետեց համարձակ:
- Յա՛, յա՛, վախեցա՛, - իբր ընկրկեց Շիրազը ու բռնելով տղեկի աջը, պաթետիկ տոնով արտասանեց.

Դեռ չե՛մ տեսել ծովը Վանա,
Չե՛մ տեսել սարն իմ Սիփանա,
Չե՛մ տեսել դեռ Միերին այս գոռ,
Որ անվախ է և անպագողոռ...
Սիերիկը, որին նվիրվեց բանաստեղծությունը, լիաթոք ու անկանգ կրկյաց իր զրնգուն, երգեցիկ դիսկանտով: Հավաքվածները Շիրազի ասմունքից ու ծիծաղկոտ-հնարամիտ վարմունքի՞ց թե երեխայի վարակիչ վերաբերմունքից նույնպես միաբան ծիծաղեցին: Մարիամիկը, որ ամաչկուտ ու քաշվելով ժպտալուց դարձել էր մի զարդանախշ գաթա, հանկարծ նկատեց իրեն հառնված Շիրազի խորամանկ-ժպտուն հայացքը ու գլխակորույս դեմքը թաքցրեց մոր փեշերի մեջ: Դա այնքա՛ն մտերմիկ էր ու անարատ-անմեղ, որ Շիրազից անբռնազբու ու լիաթոք ծիծաղ կորագեց...

Երրորդ երեխան գիտակցե՞ց, թե ներքին մի ինչ որ գզայարանով նախազգաց, որ հիմա «քեռին» իրեն կդիմի: Իսկ «քեռին», իրոք, որ մինչ այդ իր տաք թևերի մեջ էր

պարուրել միակ դեռևս «չբացահայտված» մանուկին, բացեց գիրկը ու պաթետիկ-հանդիսավոր, սակայն վատ թաքցված ծիծղուն հայացքով դիմեց ոչ այն է հավաքվածներին, ոչ այն է՝ երեխային.

- Յա՛: Հրքը սա՞ ով է, - հարցրեց, ապա աջը տղայի մազերի սանրվածքի ուղղությամբ սահեցնելով, ընդհանուրի ժպիտի տակ ականջը երեխայի շուրթերին մոտեցրեց: Սա քաշվեց, սակայն համարձակություն ունեցավ ինչ-որ անուն փսփսալ Շիրազի ականջին: Լավ չլսե՞ց, թե ցանկացավ, որ երեխան ավելի մախ ու դեմքը դարձնելով նրա կողմը ու «ի՛ նչ» ասելով, կրկին ականջը մոտեցրեց նրան: Փոքրն այս անգամ ավելի համարձակ գտնվեց. «Արայիկ», - լսելի եղավ հավաքվածներիս համար:
- Արայիկ, - ծոր տվեց Շիրազը, ապա շոյելով տղայի գլուխը, իր շարժումներին համաչափ արտասանեց.

Արայիկը,
Իմ բալիկը,
Իմ ծով սրտի
Ձինջ ալի՛քը...
Թող շողշողա՛,
Թող միշտ խաղա՛,
Սիրտս՝ նրա խաղալի՛քը...
Արտասանեց սիրագրով, մի մեղրածոր հայացքով գրկեց երեխաներին ու երջանիկ մի շող թառեց դեմքին.
- Ես ի՛ նչ անմահական բալիկներ եմ, այ՛ն արդ: Ես ի՛ նչ հարուստ ազգ ենք մենք... Թվաց, թե միտքը կիսատ թողեց և դիմեց երեխաներին: - Լավ կսովորեք, իմ քաղցր բալիկներ: Եվ, - ձայնում մարտական հրնչեքանգ խառնվեց, - միայն հայկական դպրոց կգնաք, - մատը վեր բարձրացավ...
Ուղղվեց դեպի մուտքը, մի քանի շտապ քայլեր գցեց, մեկեն կանգնեց ու շուռ գալով դեպի հավաքվածները, ոչ այն է՝ երեխաների՛ն, ոչ այն է՝ հավաքվածներին, նետեց.
- ... Կասեք Շիրազն էլ ասել, - ու զնաց փութով...
Պահ առաջ ինքնաբերաբար ստեղծված կախարդանքը աստիճանաբար համբառնվեց վեր ու անէացավ բարձր կամարների թիկնած առաստաղի տակ:
Օրը իր առտուի շրջապատույտը վերսկսեց...

Երբ գրկում եմ բալիկներին,
Ձեզ եմ գրկում, հայ՛ բալիկներ,
Երբ երգում եմ ձագուկներին,
Ձեզ եմ երգում, հայ՛ զալիքներ...

Սերգեյ ՍԱՐԿՈՍՅԱՆ

Говорите по-армянски, думайте по-армянски, живите по-армянски!!! Это наша цель!

Многие историки и ученые мира пытались разгадать загадку: как мог малочисленный и не имеющий большой военной силы народ противостоять стольким бедствиям и не только не исчезнуть с лица земли, но и возродиться...

Одно из объяснений этой загадки кроется, наверное, в характерной черте армянского народа - в его преданности своему родному языку, литературе, духовной культуре.

Там, где народ не мог победить мечом, побеждал письменно, пронося сквозь века к грядущим поколениям свои чаяния, надежду и веру.

В начале V века Месроп Маштоц создал армянский алфавит, которым мы и сейчас пишем.

Примечательна первая фраза, написанная буквами новоявленного алфавита: «Познать мудрость и наставление, постичь изречение разума». В ней выразилось ненасытное стремление народа к знанию, которое распространялось не только на собственную культуру, но и на все лучшее в культуре других народов, включало в себя желание поделиться своим духовным достоянием.

Еще до создания алфавита армяне так отшлифовали и развили свой язык, что уже V век считается «золотым веком» нашей культуры.

Именно в V веке и позднее были созданы книги и труды таких знаменитых армянских ученых, как Мовсес Хоренаци, Корюн, Павстос Бузанд, Агатангехос, Егише, Лазарь, Парбеци, Езник Кохбаци, Давид Анахт, Анания Ширакаци и другие.

Армянская литература и после «золотого века» дала ми-

ру таких крупных поэтов, как Григор Нарекаци, Нерсес Шнорали, Фрик, Наапет Кучак, Нагаш Овнатан и многие другие.

Средневековая армянская литература, особенно поэзия, ознаменовала подлинное возрождение, признаки которого в армянской литературе, философии и искусстве появились за несколько веков до европейского Возрождения.

Можно сказать, что в Армении никогда не было литературы «просто так». С самого зарождения она была мощным оружием в руках народа в борьбе за светлое будущее.

Лучшие традиции древней и средневековой литературы продолжали и развивали в XIX-XX веках такие яркие представители армянской литературы, как Хачатур Абовян и Микаел Налбандян, Раффи и Ширфанзаде, Аветик Исаакян и Ованес Туманян, Григор Зохраб и Сиаманто, Даниэл Варужан и Дереник Демирчян, Степан Зорян и Егише Чаренц, Паруйр Севак, Аксел Бакунц и другие.

Пришло новое поколение молодых поэтов и прозаиков, которые внесли своим творчеством свежую струю на различные жанры армянской литературы, углубляя ее содержательность и обогащая ее. Из-под их пера появляются новые романы, новые сборники стихов и рассказов, в которых находят художественное осмысление наше время, наша эпоха, деяния и подвиги наших современников.

Кто мог бы перечислить неисчерпаемые сокровища нашей духовной культуры?

Давайте не забывать, кто мы, на каком языке говорили наши деды и какую мудрость нам оставили.

ИЗДАТЕЛЬСКИЙ ДОМ **Шаганэ**

В Издательском Доме «**ШАГАНЭ**» вышли в свет книги:

1. Русско-армянский разговорник.
 2. «Познать мудрость» (армяно-русский вопросник для детей).
 3. «Мир имён».
 4. Армяно-русский и русско-армянский словарь.
- А также международный двуязычный русско-армянский ежемесячный журнал «Горцарар».
- Предлагаем их вашему вниманию. Хотелось наладить постоянное плодотворное сотрудничество. Поэтому

присылайте нам свои отзывы.

Готовы рассмотреть ваши пожелания и предложения.

Цена одного экземпляра (по себестоимости):

Русско-армянский разговорник – 50 руб.;

«Познать мудрость» (армяно-русский вопросник для детей) – 30 руб.;

«Мир имён» – 25 руб.;

Армяно-русский и русско-армянский словарь – 500 руб.;

«Горцарар» – 50 руб.

ПОДПИСКА НА 2006 ГОД ПО ВСЕЙ ТЕРРИТОРИИ РОССИИ

ДОРОГИЕ ЧИТАТЕЛИ!

15 октября 2005 года начинается очередная подписная кампания на журнал «Горцарар»

Прибыльный бизнес в регионы

Компания АДМАТ – производитель высококачественного чистящего порошка – ищет партнеров в области фасовки (банки, пакеты по 250-500 грамм) и реализации продукции. Рассмотрим все предложения. Подробная информация и образцы продукции в редакции.

ТИГРАН ВЕЛИКИЙ

Личность наиболее могущественного из армянских царей Тиграна Арташесяна (140-55 до н. э.), прозванного Великим, волновала умы не одного поколения исследователей и политиков. Выдающийся реформатор и государственный деятель, он никак не вписывается в «разработанный» ангажированными историографами стереотип армянского лидера. Его деятельность не только выходит за рамки «дозволенного» редакторами науки пространства, но и, по сути, противоречит уготованному для армян характеру национального героя. Подобное отношение к Тиграну Великому имеет двухтысячелетнюю традицию, и, вероятно, по этой причине образ армянского монарха до сих пор достаточно не изучен.

Однако сегодня ощущается острая необходимость в возможно полном представлении деятеля, чье имя, как ни одно другое, сопровождает национальную ис-

Планомерное уничтожение многочисленных трактатов, посвященных Тиграну Армянскому, полностью вписывалось в пропагандистскую политику Рима, о которой очень точно сказал Цицерон: «Позвольте мне тут, Квириты, последовать примеру наших поэтов-летописцев и умолчать о нашем поражении». Впрочем, сам Цицерон, в полном соответствии с официальной политикой, не отказывал себе в удовольствии представлять мощь Тиграна Великого не в аспекте личных достоинств последнего, а в ракурсе общей борьбы «азиатов» против ненавистного им Рима: «Когда Лукулл вместе со своим войском вступил в царство Тиграна, многие из племен уже были возбуждены против нашего полководца. С одной стороны, были объяты страхом племена, которые римский народ никогда и не думал беспокоить или покорить войной. С другой же стороны, среди варваров укоренилось и получило распространение жестокое и возбуждающее мнение, будто войско наше явилось в эти страны с целью ограбить их богатейшее и наиболее чтимое святилище. Многочисленные и крупные племена были таким образом возбуждены и ввергнуты вновь в страх и ужас».

Вследствие планомерного уничтожения документов армянской и понтийской историографии основными первоисточниками относительно деятельности Тиграна являются произведения очевидцев событий - официальные донесения Суллы, Лукулла и Помпея, мемуары Суллы, написанная Теофаном Митиленским «История войн Помпея», «История» Саллюстия, речи Цицерона.

Тенденциозность римских источников отмечена еще в I веке н. э. еврейским историком Иосифом Флавием. В своей книге «О войне иудейской» он указывает, что даже у римских писателей-очевидцев сильно искажены подлинные исторические факты и в угоду римлянам даны их хвалебные тенденциозные описания или же клеветнические измышления об их врагах. О Тигране же он говорит как об очень сильном царе: «В это время пришла весть о том, что царь армянский Тигран с 300-тысячным войском вступил в Сирию и намеревается покорить Иудею тоже. Узнав об этом, царица и народ Иудеи, естественно, пришли в ужас. К Тиграну, осадившему уже Птолемаиду, они отправили послов с многочисленными и подобающими подарками. Царица же Селена, которую звали также Клеопатрой и которая царствовала в Сирии, возбуждала население оказать сопротивление Тиграну. Послы явились к нему и умоляли его быть добрым и милостивым к их царице и народу. С этих пор Тигран проявлял к ним заботливое отношение, одобрял и обнадеживал их. После того, как Тигран взял уже Птолемаиду, пришли сообщить ему, что Лукулл, преследуя Митридата, не мог захватить его и что тот бежал в Иберию. Ему донесли также, что Лукулл осадил Армению и разоряет ее. Узнав об этом, Тигран вернулся в свою коренную страну».

Под Тигранакертом армянский император потерпел от Луция Лукулла поражение. На сей счет в исторической науке бытуют разные мнения. Но в чем едины неподвзятые исследователи

торию на протяжении 20 столетий. Отметим, что официальная армянская историография, которая, безусловно, существовала в имперский период правления Тиграна Великого на греческом и отчасти сирийском языках, была полностью уничтожена римлянами. Вероятно, на то имелись самые серьезные основания. Плутарх, Страбон и другие историографы древнего мира упоминают о труде Метродора Скепсийского, посвященном Тиграну. Сам автор, прозванный, между прочим, «ненавистником римлян», представляется в их изложении как «талантливый и блестящий писатель». После подчинения Армении Риму были уничтожены также и сочинения Гераклида, Тевкра, Аполлонида, Диофанта, других древних авторов, которые «имели неосторожность» обратиться в своих произведениях к образу армянского царя.

- это в статистической недостоверности официального донесения Лукулла сенату. Известнейший историк первой половины XX века Рейнак по этому поводу замечает: «Авторы донесений, уверенные в том, что их ложь не будет разоблачена, раздували свои успехи, скрывали свои неудачи, а порою свои поражения выдавали за победы: Мурена, например, удостоился триумфа, хотя он на самом деле потерпел поражение. Они крайне преувеличивали число вооруженных сил противника и соответственно преуменьшали численность своего войска. В своем отчете о сражении под Тигранакертом Лукулл определяет численность армии Тиграна Армянского в 250000 человек, в то время как другие источники исчисляют его в 80000 человек. В той же битве количество римских потерь он определяет в 5 человек убитыми и 100 ранеными, в то время как потери противника определяет в количестве 30000. Лукулл, впрочем, поступил так, следуя примеру Суллы, и можно быть уверенным, что Помпей - ученик того же учителя - еще более превзошел этих своих предшественников». Аналогичные преувеличения и ложные сведения о Лукулле и Помпее - своих покровителях - дают Теофан Митиленский и Архий Антиохийский.

«Сравнительно более достоверными источниками считаются Саллюстий и Цицерон, - пишет академик Манандян. - Но и они, по-видимому, не свободны от некоторых преувеличений». Крайне любопытной в этой связи представляется речь Цицерона относительно последующего поражения Лукулла, равно как и его вынужденного бегства из Армении: «Что касается наших воинов, им действительно удалось взять один город в царстве Тиграна, а также одержать победы в нескольких битвах, однако чрезмерная отдаленность тех стран действовала на них скверно и тоска по родине стала одолевать их. Я не буду распространяться о том, что случилось дальше. Дело кончилось тем, что наши воины, вместо того, чтобы двигаться вперед, потребовали спешного возвращения обратно».

К сожалению, образ Тиграна Великого действительно был подвергнут тщательной обработке со стороны римской цензуры. Последующие римские источники: Тит Ливий, Плутарх, Аппиан, Флор, Евтропий, Орозий - являются, по сути, явными дифирамбами, основанными на донесениях Суллы, Лукулла и Помпея. Впрочем, следует отметить, что, в отличие от всех остальных, Аппиан ссылаясь также и на нейтральные малоазийские источники.

В аспекте представления истинного облика великого армянского царя намного более ценными считаются греческие произведения, которые, увы, весьма малочисленны и дошли до нас лишь в отрывках. Они основаны на свидетельствах древних летописцев Малой Азии и заслуживают большего доверия, чем тенденциозные римские сообщения. Наиболее важным греческим источником является «История Гераклеи» Мемнона, в которой можно найти некоторые детали, характеризующие Тиграна уже как личность.

«Митридат отправил письмо к скифским царям, к парфяно-

му царю и к своему зятю, армянину Тиграну, - сообщает Мемнон. - От первых он получил отказ в помощи в борьбе против Рима; Тигран же, которого постоянно беспокоила и слезно умоляла дочь Митридата, в конце концов обещал помочь: Лукулл отправил к Тиграну в качестве посла Аппия Клавдия и потребовал выдачи царя Понта Митридата. Однако Тигран отказался выдать, говоря, что его будут осуждать все, если он выдаст Лукуллу отца своей жены Клеопатры. А сколь плох Митридат - это известно и ему самому, но он не может опозорить и осрамить себя перед родней. Он одновременно написал Лукуллу письмо, которое содержало эти слова».

Тот же Мемнон сообщает и весьма интересную информацию, косвенно свидетельствующую о том, что под Тигранакертом армянский царь генерального сражения не планировал. Об этом факте, за исключением Аппиана, умалчивают практически все римские авторы, единогласно заявляющие о полном разграблении города и вывозе оттуда всех ценностей.

«В то время, как Армения была осаждена со многих сторон, Тигран отправил к Митридату посланца и пригласил его к себе, - пишет Мемнон. - Одновременно он отправил войско в Тигранакерт, где находился его гарем. Подойдя к городу, войско это, открыв стрельбу из луков, отрезало римлянам выход из лагеря, вывезло ночью из города в первую очередь гарем и наиболее дорогие и ценные вещи Тиграна. К рассвету римляне вступили в город, но то, что было предварительно вывезено, было спасено и вручено Тиграну».

Интересно в этой связи и свидетельство Аппиана: «Когда осаждался Тигранакерт, Тигран, армия которого на тот момент составляла 250 000 пехоты и 50 000 конницы, отправил в город 6 тысяч своих воинов. Они прорвались через цепь римлян, направились к цитадели, вывели оттуда жен Тиграна и вернулись обратно».

Очевидно, что в случае сохранности свидетельств греческих авторов мы бы располагали более достоверными сведениями о великом армянском царе. Однако их осталось незначительное количество, в частности, утеряны «Исторические воспоминания» Страбона (сохранилась лишь его «География»).

